ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1950 *Общественные науки*

Ակս. Հակոբյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԽԱՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1921—1922 Թ.Թ.)

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ, ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՎԱՆՏՅՈՒՐԱՆ ԵՎ ՆՐԱ ԼԻԿՎԻԴԱՑՈՒՄԸ, ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՈՒՄ

Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին այն ժամանակ, երբ Սովետական Ռուսաստանն ապրում էր ռազմական կոմունիզմի վերջին շրջանը։ Բոլշևիկների պարտիայի 9-րդ համագումարը (1920 թ. մարտ), որը քննության առավ սովետական երկրի տնտեսական շինարարության հարցերը, և հատուկ ուշադրություն նվիրեց միասնական տնտեսական պլանին, իր որոշումներում նշեց տրանսպորտի զարգացման, վառելանյութի և մետալուրգիայի բարձրացման անհրաժեշտությունը։ «Այդ պլանում գլխավոր տեղը գրավում էր ամբողջ ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացիայի հարցը, որը Լենինն առաջադրում էր որպես «մեծ ծրագիր 10—20 տարվա համար»։ Այդ հիման վրա մշակվեց ГОЭЛРО[1]-ի հայտնի պլանը»։[2]

Սովետական Ռուսաստանը նախապատրաստվում էր ռազմական կոմունիզմից անցնելու մի նոր քաղաքականության, որով վճռական շրջադարձ պետք է կատարվեր երկրի կյանքում։ Բոլշևիկների պարտիան, Վ. Ի. Լենինի և ընկեր Ստալինի գլխավորությամբ ուրվագծում էր այդ շրջադարձի պլանը, նրա ուղիները։ Պարտիան սովետական ժողովրդին նախապատրաստում էր այդ շրջադարձը անցկացնելու կազմակերպված ձևով և ուժերի մաքսիմալ լարումով, հաղթահարելու համար ամեն տեսակի դժվարությունները և արգելակները։

1920 թվի վերջերին, երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր, Ռուսաստանում այդ նախապատրաստական աշխատանքները շարունակվում էին և ապրում իրենց վերջին էտապը։ Մոտենում էր շրջադարձն սկսելու մոմենտը։

Հայաստանի սովետական իշխանությունը, հետևելով Սովետական Ռուսաստանին և օգտագործելով նրա ավելի քան երեք տարվա փորձը, իր գոյության առաջին ամիսներում, 1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թվի գարունը, երբ բոլշևիկների պարտիայի 10-րդ համագումարի որոշումներից հետո սկսվեց անցումը նոր տնտեսական քաղաքականությանը,— չէր կարող այլ քաղաքականություն կիրառել, քան ռազմական կոմունիզմի քաղաքականու-

[1] Государственная Коммиссия по Электрификации России.
[2] *Համկ(բ)Պ Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 328։*

թյունը։ Չնայած կարճատևությանը, այնուամենայնիվ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումով Հայաստանում ապահովվեց սովետական իշխանության հետագա ամրապնդումը, զարգացումը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման ժամանակ երկիրը գտնվում էր բավականին ծանր պայմաններում։ Շարունակվում էր դաշնակների արյունոտ տիրապետության ժառանգությունն տնտեսական սուր ճգնաժամը։ Երկիրը լցված էր բազմահազար գաղթականներով ու որբերով։ Սովը և համաճարակ հիվանդությունները դարձել էին մասսայական երևույթ։

Երիտասարդ սովետական ռեսպուբլիկայի դրությունն ավելի էր բարդացել այն պատճառով, որ իր վերջին օրերն ապրող մենշևիկյան կառավարությունը Վրաստանում բլոկադայի էր ենթարկել Սովետական Հայաստանը՝ կտրելով երկաթուղային կապը նրա և Սովետական Ռուսաստանի ու Ադրբեջանի միջև։ Լոռու մի մասը՝ չեզոք-գոտին— գտնվում էր մենշևիկների իշխանության տակ (մինչև 1921 թ. փետրվարի կեսերը), իսկ Զանգեզուրում դեռևս իշխում էին դաշնակները։ Այդ ժամանակ Ալեքսանդրոպոլն իր գավառով և Հայաստանի միակ երկաթուղու կարևոր մասը գտնվում էին Թուրքիայի (քեմալականների) ձեռքում։

Այդպիսի ծանր պայմաններում Հայաստանի սովետական իշխանության առաջ ծառացած էին քաղաքական, տնտեսական և կուլտուրական բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում էին իրենց լուծումը։ Այդ խնդիրների շարքում կարևորագույնը պրոլետարիատի դիկտատուրայի օրգանների ստեղծումն ու ամրապնդումն էր, Սովետական իշխանության ամրապնդումը։ «Իշխանություն վերցնելը,— ասում է ընկեր Ստալինը,— դա գործի միայն սկիզբն է։ Մի երկրում տապալված բուրժուազիան դեռ երկար ժամանակ, շատ պատճառների շնորհիվ, ավելի ուժեղ է մնում, քան նրան տապալող պրոլետարիատը։ Այս պատճառով ամբողջ բանն այն է, որ իշխանությունը պահպանվի, այն ամրացվի, այն անհաղթելի դարձվի»։[1] Այնուհետև ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ «դրա համար անհրաժեշտ է իրագործել գոնե երեք գլխավոր խնդիր... ա) կոտրել ռևոլուցիայի տապալած և էքսպրոպրիացիայի ենթարկած կալվածատերերի ու կապիտալիստների դիմադրությունը, լիկվիդացիայի ենթարկել կապիտալի իշխանությունը վերականգնելու նրանց բոլոր և ամեն տեսակի փորձերը. բ) կազմակերպել շինարարությունը՝ բոլոր աշխատավորներին պրոլետարիատի շուրջը համախմբելու ոգով և այդ աշխատանքը տանել դասակարգերի լիկվիդացիան, նրանց ոչնչացումը նախապատրաստող ուղղությամբ. գ) զինել ռևոլուցիան, կազմակերպել ռևոլուցիայի բանակը՝ արտաքին թշնամիների դեմ կռվելու համար, իմպերիալիզմի դեմ կռվելու համար»։[2]

Սովետական ապարատի կազմակերպումն ու ամրապնդումը Հայաստանում սկսվեց այն ժամանակ, երբ արդեն Սովետական Ռուսաստանը թևակոխել էր իր գոյության չորրորդ տարին և այդ ուղղությամբ կուտակել էր մեծ փորձ։ Այս հանգամանքը խոշոր նշանակություն ունեցավ Հայաստանի, ինչպես նաև մյուս Սովետական ռեսպուբլիկաների համար։

Հայաստանի Ռևկոմի դեկրետներով կազմակերպվեցին Հայկական ՍՍՌ Ներքին Գործերի, Ռազմական, Արդարադատության, Լուսավորության, Հողա-

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, Երևան, 1940 թ., էջ 39—40։
[2] Նույն տեղում, էջ 40։

գործության, Ֆինանսների, Պարենավորման, Աշխատանքի, Առողջապահության և Սոցիալական Ապահովագրության ժողովրդական կոմիսարիատներ, ինչպես նաև Ժողովրդական Տնտեսության Խորհուրդ։ Հաղթված, բայց տակավին չզինաթափված կոնտրռևոլուցիոն ուժերի դեմ պայքարելու նպատակով, Հայաստանի Ռևկոմի 1920 թվի դեկտեմբերի 6-ի դեկրետով կազմակերպվում է Արտակարգ Հանձնաժողով։

1920 թվի դեկտեմբերի 13-ին լույս է տեսնում Հայկական ՆԳԺ Կոմիսարիատի հրամանը՝ հին վարչական հիմնարկությունների լիկվիդացման մասին։ «Սույն հրամանը հրատարակելու օրվանից,— ասված է վերոհիշյալ հրամանում,— վերացվում են հետևյալ հիմնարկություններն ու պաշտոնները՝ նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառական կոմիսարները, նախկին Ներքին Գործերի Նախարարության արտակարգ լիազորները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները, Հանրապետության միլիցիայի պահեստը, բոլոր նրանց մոտ գտնված գրասենյակներով և շտատներով»։[1] Դրանից մի քանի օր առաջ, դեկտեմբերի 6-ին, հրապարակվել էր Հայաստանի Ռևկոմի հրամանը, որով իրենց լիազորություններից զրկվեցին դաշնակցական ջախջախված կոնտրռևոլուցիոն «կառավարության» արտասահմանում գտնված բոլոր դիվանագիտական ներկայացուցիչները և միսիաները։[2] Ռևկոմի դեկտեմբերի 21-ի դեկրետով Սովետական Հայաստանի սահմաններում «վերացվում է ռուսական կայսրության «Հավաք օրինաց»-ը այն բոլոր փոփոխություններով հանդերձ, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան Սեյմը և Հայաստանի Խորհուրդը, Պարլամենտն ու կառավարությունը»։[3] Դրա փոխարեն Հայաստանում գործող օրենքներ են համարվում Ռուսաստանի ՍՖՍՌ Ռեսպուբլիկայի օրենքները (որոշ փոփոխություններով՝ համապատասխան տեղական պայմաններին)։

Արդժոզկոմատի 1920 թվի դեկտեմբերի 18-ի հրամանով լիկվիդացվում են հին դատարանները, որոնք իրենց ամբողջ գործունեությամբ ուղղված էին աշխատավոր ժողովրդի դեմ՝ հանուն տիրապետող դասակարգերի շահերի պաշտպանության։ Հին դատարանների փոխարեն Արդժոզկոմատի դեկտեմբերի 22-ի հրամանով ստեղծվում են նոր, սովետական ժողովրդական դատարաններ։[4] Հայաստանի Ռևկոմի դեկրետով Ռևկոմին կից կազմակերպվում է Գերագույն Ռևոլուցիոն Տրիբունալ, իսկ Արդժոզկոմատին կից՝ ռևոլուցիոն տրիբունալներ։ Եկեղեցին որպես աշխատավոր ժողովրդին շահագործող մի կազմակերպություն, անջատվում է պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։ ՆԳԺ Կոմիսարիատի հրամանով վերացվում են դասերը, դասային բոլոր արտոնություններն ու սահմանափակումները։ «Այժմ Հայաստանում գոյություն ունեցող դասերը և քաղաքացիների դասային բաժանումները,— ասված է հրամանի առաջին կետում,— դասային արտոնությունները և սահմանափակումները, դասային կազմակերպությունները և հիմնարկությունները, ինչպես նաև քաղաքացիական բոլոր աստիճանները վերացվում են»։

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, Պետհրատ, էջմիածին 1921 թ., էջ 11։

[2] Նույն տեղում, էջ 7։

[3] Նույն տեղում, էջ 25։

[4] Նույն տեղում, 20 21 և 27։

Ազգայնացվում են հողը և նրա ընդերքը, անտառները, մասնավոր բանկերը, Եսապովի կոնսերվի գործարանը,[1] Հայաստանի վրայով անցնող հրնդեվրոպական հեռագրալարը և այլն։

Այդ բոլորին զուգընթաց, Հայաստանի սովետական իշխանությունը բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ է լինում սովետական ապարատի կազմակերպման, ամրապնդման և երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։

Որպես իշխանության կառավարման տեղական օրգաններ, սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից գյուղերում, շրջաններում և գավառներում կազմակերպվում են ռևկոմներ։ Այն ժամանակ երկրի ներքին գործերի բարձրագույն վարչական մարմնի ֆունկցիան հանձնարարված էր ՆԳԺ Կոմիսարիատին։ Նրան էր հանձնարարված իշխանության կազմակերպումը տեղերում, երկրի ամբողջ վարչական կազմի կենտրոնացումը, բոլոր տեղական, գավառական և քաղաքային ռևկոմների վարչական ղեկավարումը, երկրի ներքին վարչական կյանքին վերաբերող բոլոր հրամանների ու որոշումների հրատարակումը։[2] Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը մեծ աշխատանքներ կատարեց նոր, սովետական վարչական ապարատի կազմակերպման, ղեկավարման և ամրապնդման ուղղությամբ։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից սուր կերպով դրվեց Կարմիր Բանակի կազմակերպման հարցը։

Կարմիր Բանակի հայկական զորամասերի սաղմնավորումն սկսվել էր դեռևս Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց առաջ։ 1920 թվի մայիսյան հերոսական ապստամբության ճնշումից հետո դաշնակների տեռորիստական ռեժիմից պաշտպանվելու և նոր ռևոլուցիոն հարձակում նախապատրաստելու նպատակով, Երևանի, Ալեքսանդրոպոլի, Իջևանի, Շամշադինի և Հայաստանի մյուս շրջանների ռևոլուցիոն բանվորների ու գյուղացիների մի մասն անցել էր Սովետական Ադրբեջան, որտեղ 1920 թվի կեսերին հիշյալ ուժերից Սովետական Ադրբեջանի օգնությամբ ձևավորվում է Կարմիր Բանակի հայկական առաջին գունդը։

Կարմիր Բանակի հայկական առաջին գնդի կազմակերպումը տեղի ունեցավ 11-րդ բանակի ռազմառևոլուցիոն Սովետի և Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի ղեկավարությամբ։ Գնդի կազմակերպմանը և ամրապնդմանը մեծ օգնություն ցույց տվեց Բաքվի ռևոլուցիոն պրոլետարիատը։ Նա իր շարքերից համալրեց այդ գունդը։ Այդ գնդի կազմը լրացվեց նաև 11-րդ բանակում եղած հայ ռազմիկներից։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, այդ գունդը դառնում է այն կորիզը, որի բազայի վրա ստեղծվում և ամրապնդվում է սովետական հզոր Կարմիր Բանակի ջոկատներից մեկը՝ Սովետական Հայաստանի Կարմիր Բանակը։ Հայաստանում Կարմիր Բանակի ձևավորման ժամանակ վերոհիշյալ գունդը բաժանվում է մասերի և նրանցից մեկական գումարտակ ուղարկվում է նոր կազմակերպված մյուս գնդերը։ Սկսվում է ձևավորվել Հայկական դիվիզիան։

---

[1] Մյուս մասնավոր գործարանների պետականացումը տեղի ունեցավ բուն ավելի ուշ, 1921 թվի ապրիլից հետո։

[2] Տես Դեկրետների և հրամանների ժողով., պրակ 1-ին, էջ 8—9։

«Հայկական լեռնա-հրաձգային դիվիզիան,— ասված է դիվիզիայի 15-ամյակի առթիվ, ՍՍՌՄ Պաշտպանության նախկին Ժողկոմ ընկեր Վորոշիլովի հրամանում, Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի ամենահին զորամասերից մեկը, ծնունդ է առել Հայաստանի աշխատավորների պարտիզանական ջոկատներից ու մարտական խմբերից, Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի ժամանակ»։[1]

1920 թվի դեկտեմբերի 5-ից սկսվում են ՀՍՍ Ռեսպուբլիկայի Ռազմական Կոմիսարիատի կազմակերպման աշխատանքները։ Կոմիսարիատը Ռուսաստանի և մյուս սովետական ռեսպուբլիկաների օրինակով ձեռնամուխ է լինում բանակի ամրապնդման աշխատանքներին։ Հաստատվում է զինվորական կոմիսարների ինստիտուտ, բանակից հեռացվում և արտաքսվում է սովետական կարգերի նկատմամբ թշնամաբար տրամադրված սպայությունը։[2] Ռազմ. Ժողկոմատի 1920 թվի դեկտեմբերի 12-ի հրամանով ՀՍՍՌ Կարմիր Բանակին կից հիմնվում է Քաղաքական վարչություն։ Կոմունիստական պարտիայի մոտավորապես 100 անդամ-թեկնածուներ, որոնք գտնվում էին Սովետական Ադրբեջանում ձևավորված Հայկական գնդում, ուղարկվում են Քաղվարչության տրամադրության տակ՝ Կարմիր Բանակի նոր զորամասերում քաղաքական-դաստիարակչական աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու համար։ Այդ ձեռնարկումը խոշոր չափով նպաստում է երիտասարդ Կարմիր Բանակի քաղաքական-բարոյական վիճակի ամրապնդմանը, որը ցայտուն կերպով դրսևորվում է 1921 թվի քաղաքացիական կռիվների ընթացքում։

Կարմիր Բանակը կազմակերպվեց երկրի տնտեսական ճգնաժամի և սովի ծանր օրերին, սակայն նա արժանացավ աշխատավոր ժողովրդի խանդավառ սիրուն և նյութական ու բարոյական մեծ օգնությանը։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ամենուրեք միտինգներ էին գումարում, աջակցում էին Կարմիր Բանակի կազմակերպումը և չնայած իրենց նյութական ծանր պայմաններին, ամեն կերպ օգնում էին նրան։ 1920 թվի դեկտեմբերի 11-ին Աշտարակում և Օշականում տեղի ունեցած աշխատավոր գյուղացիների միտինգներում ընդունված բանաձևում կարդում ենք. «Օշականում և Աշտարակում կազմակերպված միտինգներում հասարակությունը լսելով զեկուցումը Կարմիր Բանակի դերի և նրա պարենավորման մասին, խանդավառությամբ որոշեց հացի վերջին պատառը, այլ մթերքները և սայլերը տրամադրել Կարմիր Բանակի կարիքների համար»։[3]

Նման որոշումներ են ընդունել նաև Երևանի, Ղամարլուի, Ներքին Ախտալի, Էջմիածնի և շատ շրջանների աշխատավորների ժողովները։

11-րդ Կարմիր Բանակի օրինակով ու օգնությամբ, Հայաստանի բանվորների ու գյուղացիների ամենալայն աջակցությամբ, Հայկական Կարմիր Բա-

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 125, 1936 թ., հունիսի 1։

[2] Պետք է նշել, որ այս գործը պահանջված հետևողությամբ և արագությամբ չկատարվեց, որից օգտվեցին դաշնակները՝ 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի նախապատրաստման ժամանակ։ Սպայության մի մասին հաջողվեց պատսպարվել և անցնել դաշնակցական բանդաների կողմը, որոնք այդ ժամանակ կենտրոնացած էին Ալագյազի ստորոտում և Իշ-Իսյանիում։

[3] «Կոմունիստ» (հայերեն), օրգան ՀԿ(բ)Կ կենտկոմի և ՀՍՍՌ Ռեկոմի, № 8, 1920 թ. դեկտեմբերի 14, Երևան։

նակը ամրապնդելով իր շարքերը, 1921 թվի քաղաքացիական կռիվների ընթացքում տալիս է մարտական առաջին քննությունը։

Նորակազմ Սովետական իշխանությունն անմիջապես ձեռնամուխ եղավ ագրարային հարցի լուծմանը։ Հայաստանի Ռևկոմի 1920 թվի նոյեմբերի 29-ի դեկլարացիայում արդեն տրված էին ագրարային հարցի լուծման հիմնական սկզբունքները։ Դրան հետևող մի շարք դեկրետներով Ռևկոմը քայլ առ քայլ իրականացնում է այդ սկզբունքները։ 1920 թվի դեկտեմբերի 28-ին լույս է տեսնում Ռևկոմի դեկրետը հողերի պետականացման մասին։ Դեկրետում ասված է.

«Բանվորա-գյուղացիական ազգաբնակության հողազուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվող ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նադելի, եկեղեցական, վանքային, վակուֆային,[1] մեչետային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը դառնում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության սեփականություն»։[2]

Ռևկոմի 1921 թվի հունվարի 10-ի և 11-ի դեկրետներով պետականացվում են Ռեսպուբլիկայում գտնվող բոլոր անտառները և ամբողջ հողի ընդերքը։[3] Հայաստանում պետականացվեց մոտ 1,5 միլիոն հեկտար հող, որը հատկացվեց գյուղացիական տնտեսությունների օգտագործմանը։

Սովետական պետության այդպիսի միջոցառումը միաժամանակ նախապայմաններ ստեղծեց հետագայում գյուղի սոցիալիստական վերակառուցման, նրա անարգել զարգացման և դրա հիման վրա՝ աշխատավոր գյուղացիության ունևոր ու կուլտուրական կյանքի համար։ Հողային հարցի լուծման և մյուս կարևորագույն ձեռնարկումների շնորհիվ չքավոր գյուղացիությունն ավելի ամուր կերպով համախմբվեց բոլշևիկների պարտիայի և Սովետական իշխանության շուրջը։

Միջակ գյուղացիությունն սկսեց ավելի մոտ կանգնել Սովետական իշխանությանը և ավելի հաստատապես օժանդակել նրան։

Սովետական իշխանությունը լուծեց նաև ազգային հարցը, միանգամ ընդմիշտ անցյալի գիրկը նետելով ազգային երկպառակությունը և թշնամանքը, որ ցարիզմի և դաշնակների ժամանակ արմատավորվել էր Հայաստանի ժողովուրդների մեջ։ Դաշնակներն իրենց արյունոտ տիրապետության 30 ամիսների ընթացքում Հայաստանում թալանել, կոտորել ու ոչնչացրել էին ադրբեջանական բազմաթիվ գյուղեր (Զանգիբասարում, Վեդիբասարում, Էջմիածնում, Զանգեզուրում, Դարալագյազում և ուրիշ շրջաններում)։ Նրանք գազանաբար հալածում, թալանում ու ոչնչացնում էին նաև մյուս ազգերին պատկանող բնակչությանը։

Դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները կատարելով ազգային բուրժուազիայի կամքը և վարելով ագրեսիվ նացիոնալիզմի քաղաքականություն, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի եղբայրական ժողովուրդներին կռվի էին հանել միմյանց դեմ։ Նրանք այդ կռիվներում ոչնչացրին

[1] Վակուֆային հող՝ մզկիթին, մահմեդական հաստատությանը կամ հիմնարկությանը բարեգործական նպատակով կտակված հողամաս, կալվածք։

[2] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջ 21։

[3] Նույն տեղում, էջ 61—63։

տասնյակ հազարավոր աշխատավորներ։ 1921 թվի հուլիսի 6-ին Թիֆլիսի պարտիական ակտիվի ժողովում իր տված զեկուցման մեջ անդրադառնալով այդ հարցին, ընկեր Ստալինն ասել է. «Ըստ երևույթին, ակներևորեն նացիոնալիստական կառավարությունների երեք տարվա գոյությունը Վրաստանում (մենշևիկներ), Ադրբեջանում (մուսավաթականներ), Հայաստանում (դաշնակներ) զուր չի անցել։ Այդ նացիոնալիստական կառավարությունները, իրենց նացիոնալիստական քաղաքականությունը վարելով, աշխատավորության մեջ ագրեսիվ նացիոնալիզմի ոգով աշխատելով, վերջապես, բանն այնտեղ հասցրին, որ այդ փոքրիկ երկրներից յուրաքանչյուրը շրջապատվեց թշնամական նացիոնալիստական մթնոլորտի օղակով, որը Վրաստանին և Հայաստանին զրկեց ռուսական հացից ու ադրբեջանական նավթից, իսկ Ադրբեջանին ու Ռուսաստանին՝ Բաթումի վրայով եկող ապրանքներից։ Ես արդեն չեմ խոսում զինված ընդհարումների (վրացա-հայկական պատերազմ) և կոտորածի (հայ-թաթարական), որպես նացիոնալիստական քաղաքականության բնական հետևանքների մասին»։[1]

Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ Սովետական իշխանությունը Հայաստանում կիրառելով ինտերնացիոնալիզմի քաղաքականություն, Սովետական Ռուսաստանի օրինակով հռչակեց բոլոր ազգերի իրավահավասարություն՝ հիմնված բոլոր աշխատավորների դասակարգային համերաշխության լիակատար դրսևորման վրա։ Սոցիալիզմի համար մղվող պայքարում ամրապնդվեց տարբեր ազգերի աշխատավորների եղբայրական, խաղաղ և պատմության մեջ իր նմանը չունեցող համագործակցությունը։ Դաշնակների հալածանքների պատճառով Հայաստանից Ադրբեջան և այլ վայրեր փախած ադրբեջանական բնակչությունը սովետական իշխանության հաստատումից հետո սկսում է վերադառնալ իր բնակավայրերը։ Սովետական պետությունը նյութական և ամեն տեսակի օգնություն է կազմակերպում վերականգնելու նրանց ավերված գյուղերը և ձեռք բերելու ապրուստի միջոցներ։

Հայաստանի Ռևկոմի 1920 թվի դեկտեմբերի 6-ի դեկրետով Ռեսպուբլիկայի սահմաններում հայերենը ճանաչվում է պետական լեզու։ Հայկական դպրոցներին զուգընթաց բացվում են ադրբեջանական, ռուսական դպրոցներ։ Ազգային լեզուներով սկսվում է հրատարակվել գրականություն։

Սովետական Ռուսաստանի օրինակով ազգային հարցի լուծումը Հայաստանում, անսահման խանդավառություն առաջ բերեց աշխատավորական մասսաների մեջ։ «Տապալելով կալվածատերերին ու կապիտալիստներին,— ասում է ընկեր Ստալինը,— Հոկտեմբերյան ռևոլուցիան փշրեց ազգային-գաղութային ճնշման շղթաները և այդ ճնշումից ազատագրեց լայնատարած պետության (այսինքն ցարական Ռուսաստանի— Ա. Հ.) բոլոր ճնշված ժողովուրդներին՝ առանց բացառության»։[2] Սովետական իշխանությունն ստեղծեց բոլոր անհրաժեշտ պայմանները՝ նրանց տնտեսական, կուլտուրական անարգել զարգացման և վերածնության համար։

Առաջին իսկ օրերից սովետական իշխանությունը Հայաստանում խոշոր ձեռնարկումներ կատարեց նաև կուլտուրայի բնագավառում։ Այդ աշխատանքը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվում է Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատ։ Հայաստանի Ռևկոմի 1920 թ. դեկտեմբերի

1 Ի. Ստալին, Երկեր, հատոր 5, Երևան, 1948 թ., էջ 106—107։
2 Ի. Ստալին, Երկեր, հատոր 10, Երևան, 1949 թ., էջ 275։

17-ի դեկրետով պետական սեփականություն են հայտարարվում և հանձնվում Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատին «Բոլոր ազգության հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները) իրենց ամբողջ շարժական և անշարժ գույքով»։[1] Կազմակերպվում են Երևանի Պետական Համալսարանը և մի շարք նոր դպրոցներ ու կուլտուրական-հաստատություններ։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և այն կազմակերպելու նպատակով Ռևկոմին կից ստեղծվում է Ժողովրդական Տնտեսության Խորհուրդ (Ռևկոմի 1921 թվի հունվարի 21-ի դեկրետով)։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունն այն ժամանակ ապրում էր ծայրահեղ քայքայված վիճակ։ Այդ տնտեսությունը, որը ցարիզմի տիրապետության ժամանակաշրջանում, շնորհիվ վերջինիս գաղութային ռեժիմի, դտնվում էր ամենահետամնաց մակարդակի վրա, դաշնակների տիրապետության օրով, նրանց ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով, է՛լ ավելի հետ գնաց ու քայքայվեց։

Սովետական Հայաստանի դրությունն ավելի էր բարդանում նաև նրանով, որ, ինչպես նշեցինք, այդ ժամանակ Ալեքսանդրոպոլն իր գավառով դեռևս մնում էր Թուրքական օկուպանտների ձեռքում, որոնք այնտեղ էին մտել 1920 թվի նոյեմբերի 7-ին։ Նրանք բարբարոսաբար հետապնդում և սպանում էին հայերին, կողոպտում և հափշտակում էին բանվորների ու գյուղացիների ապրուստի վերջին միջոցները, սովի մատնելով նրանց, թալանում և ոչնչացնում էին այն նյութական արժեքները, որոնք ստեղծված էին աշխատավորության քրտինքով։ Թուրքական օկուպանտների բարբարոսությունները գնալով խստանում էին և անցնում ամեն մի չափ ու սահման։

Այս ծանր ու սարսափելի օրերին Սովետական Ռուսաստանը դարձյալ իր եղբայրական օգնության ձեռքն է մեկնում հայ ժողովրդին, սանձահարելով Թուրքական օկուպանտների բռնություններն ու գազանությունները։

Ոգևորված Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ և Սովետական Ռուսաստանի կողմից հայ ժողովրդին ցույց տրվող օգնությամբ, ամենածանր պայմաններում գտնվող Շիրակի աշխատավորությունը շարունակում է իր պայքարը Թուրքական օկուպանտների դեմ։ Նրան օգնության է հասնում հերոսական 11-րդ բանակը, որի զորամասերը 1921 թվի ապրիլի 23-ին մտնում են Ալեքսանդրոպոլ։ Թուրքական օկուպանտները դուրս են շպրտվում Ալեքսանդրոպոլից ու նրա գավառից։

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, իր հերթին թշնամական դիրք էր բռնել Սովետական Հայաստանի նկատմամբ։ Այդ ժամանակ մենշևիկյան Վրաստանում էին կենտրոնացած Կովկասի կոնտրռևոլուցիոն ուժերը, ինչպես նաև ջախջախված ռուսական սպիտակ-գվարդիական տականքները։ Մենշևիկները, «Վրաստանը դարձնում էին եվրոպական իմպերիալիզմի մի գաղութ և պայքարի պատվար՝ սովետական իշխանության դեմ, իսկ վրաց ժողովրդին հանձնում էին «տրկության իմպերիալիստների ձեռքը»,- Սովետական Հայաս-

---

[1] Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջ 16։

[2] Համկ(բ)Պ կենտկոմի և ՍՍՌՄ ԺԿՍ-ի ողջույնից՝ Վրաստանում սովետական կարգեր հաստատելու 20-ամյակի առթիվ, «Սովետական Հայաստան», 1941 թ. փետրվարի 25։

տանին հարվածելու, սովետական կարգերը տապալելու նպատակով, ինչպես նշեցինք վերևում, բլոկադա էին հայտարարել նրան։ Հակառակ 1920 թվի մայիսին Սովետական Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագրի, որով նախատեսված էր ազատ տրանզիտ Վրաստանի վրայով Հայաստան ուղարկվող ապրանքների համար, վրաց մենշևիկները փակել էին երկաթուղային ճանապարհները Ռուսաստանից և Ադրբեջանից Հայաստան ուղարկվող ապրանքներով ու կենսամթերքով բեռնված գնացքների առջև։

Վրացական մենշևիկների սանձարձակությունն այն աստիճանի էր հասել, որ նրանք ձերբակալում և մի քանի օր Թիֆլիսում պահում են Հայաստանում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի գնացքը, որը հնարավորություն է ստանում մեկնել Հայաստան միայն Սովետական Ռուսաստանի կառավարության ամենավճռական միջամտությունից հետո։ Մենշևիկների այդօրինակ քաղաքականության և Հայաստանի դժվարին դրության մասին Բաքվի բոլշևիկների 1921 թվի փետրվարին տեղի ունեցած կոնֆերանսի՝ ընթացիկ մոմենտի վերաբերյալ ընդունած բանաձևում ասված է.

«Անդրկովկասում խորհրդային հանրապետություններին կից մենշևիկյան Վրաստանի գոյությունը, որը խորհրդային հանրապետությունների նկատմամբ նվաճողական տրամադրություններ է ցույց տալիս,— վերջիններիս դժվարին կացության մեջ է դնում, մանավանդ խորհրդային Հայաստանի աշխատավորներին, որոնց թե նյութապես և թե մարդկանցով պետք է օգնություն մատակարարել։ Խորհրդային հեղափոխության ամենաշուտ հաղթանակը Վրաստանում և խորհրդային Անդրկովկաս կազմելը միակ ելքն է այդ դժվար կացությունից դուրս գալու համար»։[1] Պրոլետարական Բաքվի Սովետը, մենշևիկյան Վրաստանի կողմից Սովետական Հայաստանի նկատմամբ եղած վարմունքի դեմ 1920 թվի դեկտեմբերին կտրական բողոք է ուղարկում մենշևիկյան կառավարությանը, հայտարարելով, որ Բաքվի Սովետը «Ստիպված է վերաքննության առնել Վրաստանի հետ կնքված առևտրական դաշինքը՝ նավթ բաց թողնելու վերաբերմամբ»,[2] Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի միջամտությունից հարկադրված, վրացական մենշևիկները բաց են թողնում Հայաստան մեկնող մի շարք գնացքներ։ Սակայն նրանք իրենց բլոկադան Հայաստանի նկատմամբ չեն վերացնում մինչև Սովետական կարգերի հաստատումը Վրաստանում։

Հայաստանի սովետական կարգերի դեմ իրենց կատաղի պայքարն էին շարունակում նաև Զանգեզուրում ժամանակավորապես ապաստան գտած դաշնակցական ոհմակները։ Հին կարգերի ռեստավրացիայի նպատակով նրանք նախապատրաստվում էին միանալ ներքին կոնտրռևոլուցիոն ուժերին և թիկունքից հարվածել Հայաստանի Սովետական Ռեսպուբլիկային։

Նման դժվարին պայմաններում Հայաստանի աշխատավորները բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ և Սովետական Ռուսաստանի օրինակով ու օգնությամբ լծվում են երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործին, սոցիալիզմի կառուցման պատմական աշխատանքներին։

Քայքայված տնտեսությունը վերականգնելու և սոցիալիստական շինարարությանն օժանդակելու նպատակով այդ ժամանակ Հայաստանում լայնորեն

[1] «Կոմունիստ» № 53, 1921 թ., փետրվար 11, Երևան։
[2] «Կոմունիստ», № 16, 1920 թ., դեկտեմբեր 24, Երևան։

կիրառվում են կոմունիստական շաբաթօրյակները՝ հազարավոր աշխատավորների մասնակցությամբ։ Առաջին շաբաթօրյակը Երևանում տեղի է ունենում 1920 թվի դեկտեմբերի 25-ին։ 1921 թվի հունվարի 1-ի շաբաթօրյակին Երևանում մասնակցում են 1500-ից ավելի աշխատավորներ։[1]

Սոցիալիստական աշխատանքի խանդավառությունը համակում է Հայաստանի բանվոր դասակարգին, որը սովետական Դարգերի ամրապնդման համար մղվող պայքարում իր հետևից է տանում աշխատավորական մյուս խավերին։

Չնայած սովետական իշխանության ու նրա ապարատի ամրապնդման ուղղությամբ կատարված սկզբնական ձեռնարկումներին, այնուամենայնիվ դրությունը դեռևս շարունակում էր մնալ ծանր և այն ավելի բարդացավ 1921 թվի փետրվարին Հայաստանում սկսված քաղաքացիական կռիվների հետևանքով, կռիվներ, որոնք որոշ ընդհատումներով տևեցին փետրվարից մինչև հուլիսի կեսերը։

* * *

Հայաստանում սովետական իշխանության գոյության երրորդ ամսում, 1921 թ. փետրվարի կեսերին, ժողովրդի թշնամի դաշնակները, մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների հետ գործակցված ավանտյուրիստական զինված ելույթ սկսեցին սովետական իշխանության դեմ։ Հայաստանում սկսվում են քաղաքացիական կռիվները, որոնց պատճառով հինգ ամսով ընդհատվում են խաղաղ տնտեսական շինարարության աշխատանքները։

Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության դեմ ուղղված այդ կոնտրռևոլուցիոն ելույթն ուներ իր որոշակի նպատակը՝ տապալել սովետական իշխանությունը Հայաստանում և վերականգնել հին կարգերը, երկիրը կրկին դարձնելով իմպերիալիստական պետությունների գաղութ և կոնտրռևոլուցիայի բազա ընդդեմ Սովետական Ռուսաստանի։ Դաշնակների կոնտրռևոլուցիոն այդ ելույթն ինքնամփոփ երևույթ չէր։ Նա սերտորեն կապված էր միջազգային ռեակցիայի հետ և հանդիսացավ նրա արտահայտություններից մեկն Անդրկովկասում։

Անտանտայի հին գայլերը՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները, բազմապիսի օգնություն ցույց տալով Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն ուժերին, նպատակ էին դրել, ինչ գնով էլ ուզում է լինի, ձեռքից բաց չթողնել Անդրկովկասը։ 1921 թվի հունվարին Թիֆլիսում տեղի է ունենում դաշնակների խորհրդակցությունը, որի քննության առարկան էր Հայաստանում սովետական իշխանության տապալումը։ Այդ խորհրդակցությանը մասնակցում էին Անդրկովկասի և Ռուսաստանի կոնտրռևոլուցիոն ուժերի ներկայացուցիչները։ Իսկ նրա աշխատանքները ղեկավարում էին անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստները։ Վերջիններիս թելադրությամբ և անմիջական օգնությամբ այդ ժամանակ մենշևիկյան Վրաստանում կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի և Կովկասի լեռնային ռեսպուբլիկայի «փրկության կոմիտեներ», որոնց առաջնահերթ խնդիրն էր Կովկասում սովետական ռեսպուբլիկաների դեմ կազմակերպել կոնտրռևոլուցիոն զինված ելույթներ։ «... Երբ

[1] Տես «Կոմունիստ», № 25, 1921 թ., հունվարի 6, Երևան։

Թիֆլիսում կազմակերպվեցին Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնային ռեսպուբլիկայի և այլ «փրկության կոմիտեներ», այդ՝ Կովկասում ամենուրեք սովետական իշխանության դեմ ապստամբություն բարձրացնելու պլան էր»[1]

Սովետական իշխանության գոյության երկու և կես ամիսների ընթացքում Հայաստանում զգալի ձեռնարկումներ էին կատարված դաշնակների թողած ավերածությունների լիկվիդացման ուղղությամբ։ Աստիճանաբար ամրապնդվում էր սովետական ապարատը, սկսել էին աշխատել առանձին տրնտեսական ձեռնարկներ, գյուղացիությունը կարգի էր բերում իր տնտեսությունը։ Սակայն այդպիսի կարճ ժամանակաշրջանում երբեք հնարավոր չէր հիմնովին լիկվիդացնելու երկրի պարենային ծանր դժվարությունները։ Իսկ այդ հանգամանքը հնարավորություն չէր տալիս Հայաստանում պահելու անհրաժեշտ քանակությամբ զինված ուժ։ Ռուսաստանից Հայաստան կենսամթերքների փոխադրությունը խիստ դժվարացել էր, իսկ մենշևիկյան Վրաստանը փակել էր ճանապարհը Սովետական Ռուսաստանից և Ադրբեջանից դեպի Հայաստան մեկնող պարենամթերքներով բեռնված գնացքների համար։[2]

Մյուս կողմից, դեռևս չէին ամրապնդված սովետական իշխանության օրգաններն ու նրա ապարատը։ Զգացվում էր պարտիական և սովետական կադրերի խիստ պակասություն։ Առանձնապես ծայրամասերում և լեռնային շրջաններում (Դարալագյազում, Արագածի ստորոտում, Բաշ-Գյառնիում, Նոր-Բայազետում և այլն), սովետական ապարատը գտնվում էր ավելի թույլ, անկազմակերպ վիճակում։ Հայաստանի Ռևկոմը այդ ժամանակ վերոհիշյալ շրջանների հարցով ինչպես հարկն էր չզբաղվեց։

Օգտվելով այդպիսի դրությունից, սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանում թաքնված դաշնակցական զինված ուժերը կենտրոնանում և պատսպարվում էին վերոհիշյալ շրջաններում։ Հակասովետական ուժեղ ագիտացիային զուգընթաց, նրանք լրացնում և վերադասավորում էին իրենց ուժերը։ Մի շարք շրջաններում և գյուղերում դաշնակներին հաջողվեց նույնիսկ թափանցել ռևկոմների կազմում (Դարալագյազ, Բաշ-Գյառնի), ուր նրանք քայքայիչ աշխատանքներ էին կատարում։

Այնուհետև, ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման ընթացքում Հայաստանում տեղի ունեցան մի շարք շեղումներ և սխալներ, որոշ դեպքերում անտեսվեցին Հայաստանի տեղական առանձնահատկությունները։

Տեղական օրգանները և աշխատողներից շատերը որոշակի ցուցումներ չստանալով Հայաստանի Ռևկոմից և մյուս օրգաններից, խախտում էին ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։ Բռնագրավումները կրում էին ծայրահեղ անկազմակերպ բնույթ, որից հաճախ տուժում էին չքավոր և միջակ գյուղացիները։ Ունևորները և կուլակները սաբոտաժ էին անում։ Նրանք սովետական իշխանությունից թաքցնում էին իրենց պարենային պաշարները։ Թույլ էին կազմակերպված չքավոր և միջակ գյուղացիները։

Այդ բոլորի հետևանքով միջակ գյուղացիության որոշ մասի մեջ առաջացավ դժգոհություն, որն օգտագործեցին սովետական կարգերի երդվյալ

[1] Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи, 1939 г., стр. 110.
[2] Նույն տեղում, էջ 10։

թշնամիները՝ դաշնակները, էսերները, հնչակյանները, սպեցիֆիկները և մյուս կոնտրռևոլուցիոն ուժերը։

Հայաստանի Ռևկոմը, որի կազմի մեջ, ինչպես պարզվեց հետագայում, խցկված կային օպորտունիստական տարրեր, դաշնակների և մյուս կոնտրռևոլուցիոն պարտիաների նկատմամբ ձեռք չառավ վճռական միջոցներ։ Այդ պարտիաների ղեկավար և ակտիվ գործիչներից շատերը սովետական իշխանության հաստատման առաջին ամիսներին ոչ միայն ազատ ման էին գալիս, այլ նույնիսկ նրանցից ոմանք աշխատանք ստացան սովետական ապարատում։ Նրանք ամեն կերպ արագացնում էին զինված ելույթի նախապատրաստումը սովետական իշխանության դեմ։

Իրենց շուրջը համախմբելով կուլակություններ, սպեկուլյանտներին, խմբապետներին, հոգևորականությանը և այլ կարգի տականքներին, 1921 թվի փետրվարի 13-ին դաշնակները Դարալագյազում սկսում են զինված ելույթ։ Դրանից մեկ օր հետո, համարյա միաժամանակ, դաշնակցական բանդաների զինված ելույթներ են տեղի ունենում Բաշ-Գյառնիում, Ապարանում, Նոր-Բայազետում, Ախտայում։ Սկսվում է փետրվարյան ավանտյուրան։

Ավանտյուրայի սկզբում դաշնակներին հաջողվել էր ամրանալ Դարալագյազի, Նոր-Բայազետի, Բաշ-Գյառնիի, Ելենովկայի (այժմ՝ Սևան), Ապարանի, Աշտարակի, Էջմիածնի շրջաններում և Երևան քաղաքում։[1] Չնայած դրան, դաշնակներին չհաջողվեց Հայաստանում տապալել սովետական իշխանությունը։ Ղամարլվում (այժմ՝ Արտաշատ), Վեդիում, Ղարաքիլիսայում (այժմ՝ Կիրովական), Դիլիջանում, Ղազախում կանգուն մնաց սովետական իշխանությունը, որին միացավ նաև, 1921 թ. փետրվարի կեսերին Լոռիում տեղի ունեցած զինված ապստամբության շնորհիվ, մենշևիկների լծից ազատագրված Լոռին։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, ընդհատելով խաղաղ շինարարական աշխատանքները, և խտացնելով Կարմիր Բանակի հայկական զորամասերի շարքերը, կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ զենքը ձեռքին հերոսական պայքարի դուրս եկան սովետական իշխանության թշնամիների դեմ։ Այդ մարտական օրերին հանուն Սովետական Հայրենիքի, նրանք մարտնչում էին Ս. Օրջոնիկիձեի գլխավորած հերոսական 11-րդ բանակի զորամասերի հետ կողք կողքի, բանակ, որը ստեղծվել, կոփվել ու ամրապնդվել էր Սովետական Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներում։

1921 թվի փետրվարի կեսերից մինչև ապրիլի սկիզբը, մեկ և կես ամսում, տեղի ունեցան համառ մարտեր Կարմիր Բանակի և դաշնակցական բանդաների միջև։ Գնալով ավելի ու ավելի էին մեծանում Կարմիր Բանակի ու Հայաստանի բանվորներից ու գյուղացիներից բաղկացած պարտիզանական ջոկատների հաջողությունները ռազմաճակատում։

Ժողովրդի թշնամի դաշնակների դեմ պայքարելու համար, 1921 թվի փետրվար-մարտ ամիսներին Հայաստանի մի շարք գավառներում և շրջաններում բանվորներից ու գյուղացիներից կազմակերպվում են պարտիզանական ջոկատներ, որոնք խոշոր դեր են խաղում այդ կռիվների ժամանակ։ Դիլիջանի

[1] Այդ ժամանակ Զանգեզուրում դեռ սովետական կարգեր չէին հաստատված, իսկ Ալեքսանդրոպոլում (այժմ Լենինական) կանգնած էին Թուրքական «կուպացիոն զորքերը»

գավառի Քարվանսարա, Սևքար, Աչաջուր և այլ գյուղերի կոմունիստներից, կոմերիտականներից և աշխատավոր գյուղացիներից ձևակերպվում է կոմունիստական գումարտակ, որը դաշնակցական բանդաների դեմ մարտական գործողություններ է կատարում Ելենովկայի շրջանում։ Այդպիսի պարտիզանական գումարտակներ և ջոկատներ են կազմակերպում նաև Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Ղամարլուի, Վեդիի, Ելենովկայի և մենշևիկյան լծից նոր ազատագրված Լոռու բանվորներն ու աշխատավոր գյուղացիները։

Նոր Բայազետի պարտիզանական ջոկատը ձևավորվեց մարտական գործողությունների ընթացքում։ Նա ստեղծվեց անջատ կոմունիստական խմբակներից՝ Բաքվի բանվորներից, Շամշադինի, Նոր-Բայազետի, Դիլիջանի աշխատավոր գյուղացիներից։ Այս ջոկատի պարտիզանների թիվը հասնում էր մոտ 500-ի։ Ջոկատը հերոսական գործ կատարեց Նոր Բայազետի համար մղած կռիվներում։ Մարտի 15-ի փողոցային մարտերում ջոկատը համառորեն կռվեց դաշնակների՝ թվով ավելի շատ ուժերի դեմ, հաջողությամբ կատարեց իր մարտական խնդիրը՝ հակառակորդին դուրս շպրտելով քաղաքից։[1] Ջոկատը այդպիսի հերոսական գործողություններ կատարեց նաև Ելենովկայի համար մղված մարտերում։

Կարմիր Բանակի հայկական զորամասը գտնվում էր Ղամարլու—Վեգի ճակատում։ Մեկ և կես ամիս մնալով շրջապատման մեջ, այդ զորամասերը, 11-րդ բանակի գնդերից մեկի հետ, մի քանի անգամ ետ են մղել քանակով ավելի թշնամու զորքերի կատաղի հարձակումները և իրենք են անցել հակահարձակման, թշնամուն պատճառելով մեծ վնասներ։

Աշխատավորական մասսաների մեջ չունենալով հենարան, դաշնակները իրենց ամբողջ հույսը դնում են արտաքին օգնության վրա։ Նրանց բավականաչափ օգնություն են ցույց տալիս վրացական մենշևիկները։ Սակայն 1921 թվի փետրվարի 25-ին Վրաստանի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ արդեն տապալել էին Անդրկովկասում կոնտրրևոլուցիոն վերջին հենարան մենշևիկների իշխանությունը և հաստատել սովետական կարգեր։ Դա ծանր հարված էր դաշնակցական ավանտյուրիստներին։ Մենշևիկների իշխանության տապալումից հետո դաշնակներն ավելի մեծ հույս են դնում Թուրքիայի վրա, նրանից խնդրելով զենք, ռազմամթերք։

1921 թվի մարտի 1-ին, երբ Կարմիր Բանակի զորամասերը Ելենովկա—Երևան, Համամլու (Սպիտակ)—Ապարան—Երևան և Ղամարլու—Երևան ուղղություններով սկսել էին հարձակումը և սեղմել հակառակորդի օղակումը, դաշնակները դիմում են Թուրքիայի օգնությանը, խնդրելով նրան՝ վերադարձնել 1920 թվի աշնանը, հայ-թուրքական պատերազմի ժամանակ վերցրած ռազմագերիներին՝ Կարմիր Բանակի դեմ կռվելու համար, ինչպես նաև իրենց օգնել սպառազինությամբ և այլ միջոցներով։- Միաժամանակ դաշնակները պատրաստակամություն են հայտնում բոլոր հարցերում Թուրքիայի հետ ամուր դաշինք հաստատել ընդդեմ սովետական կարգերի։ Այդ օրերին դաշնակները, հօգուտ թուրքական օրիենտացիայի՝ մոլեգին ագիտացիա են անում, փորձելով կրկին խաբել հայ ժողովրդին, որը բազմաթիվ մարդկային և հրս-

---

[1] Տես «Ղամարլուից Զանգեզուր», հիշողությունների ժողովածու, Պետհրատ, 1931 թ., էջ 140 – 143։

[2] Տես Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4/144, գ. 128, թ. 12։

կայական նյութական վնասներ էր կրել թուրքական ֆեոդալների և բուրժուազիայի շովինիստական քաղաքականությունից։

Թուրքական կառավարության ներկայացուցիչը, որ գտնվում էր դաշնակների մոտ, ռազմաճակատներում և թիկունքում ճառերով հանդես էր գալիս դաշնակցական հրոսակախմբերի առաջ՝ կոչ անելով նրանց՝ մինչև վերջ կռվելու բոլշևիկների դեմ, խոստանալով թուրքական կառավարության ամեն տեսակի օգնություն։

Մյուս կողմից դաշնակները դիմում են նաև անգլո-ֆրանսիական ու ամերիկյան իմպերիալիստներին, իրանական խաներին, խնդրելով ավելի ուժեղացնել ցույց տրվող օգնությունը։

Սակայն ոչ մի ուժ ավանտյուրիստներին փրկել չէր կարող հերոսական Կարմիր Բանակի և նրա թիկունքում կանգնած Հայաստանի բանվորների ու աշխատավոր գյուղացիների հարվածներից։ Հակառակ դաշնակների ու նրանց տերերի՝ օտարերկրյա իմպերիալիստների ամեն տեսակ ճիգերի, ծավալելով հարձակողական մարտական գործողությունները, Կարմիր Բանակն առաջ էր ընթանում։ Երևանի տակ համառ կռիվներում ջախջախելով հակառակորդի ուժերը, ապրիլի 2-ին Կարմիր Բանակը ազատագրում է Երևանը, հաջորդ օրը՝ Էջմիածինը։ Հետապնդելով խուճապահար նահանջող հակառակորդին, Կարմիր Բանակը 1921 թ. ապրիլի 7-ին ազատագրում է Բաշ-Գյառնին։ Ապրիլի 9—15-ը կոնտրռևոլուցիոն բանդաներից մաքրվում են նաև Ղարանլուղի (այժմ Մարտունի), Բասարգեչարի և Դարալագյազի շրջանները։ Նոր Բայազետի, Ախտալի, Ապարանի և Աշտարակի շրջանները ազատագրված էին մինչև ապրիլի 2-ը։

1921 թ. ապրիլի 6-ին «Իզվեստիա» լրագրում տպագրվում է քաղաքացիական կռիվներում հայկական Կարմիր Բանակի զորամասերի ղեկավարներից մեկի՝ փորձված բոլշևիկ Գևորգ Աթարբեկյանի հեռագիրը, որի մեջ ասված է.

«Երևան, 2 ապրիլի։ Այսօր հայ աշխատավոր մասսաների ջանքերով, Կարմիր Բանակի զորամասերի օժանդակությամբ, լիկվիդացվեց դաշնակցություն պարտիայի ավանտյուրան...։ Հայ գյուղացիները և բանվորները, ջախջախելով ավանտյուրիստների բանդա—խմբակները՝ գրավեցին Սովետական Հայաստանի մայրաքաղաք՝ Երևանը, վերջնականապես բարձրացնելով աշխատանքի կարմիր դրոշը։ Քաղաքի ամբողջ բնակչությունը հանդիսավոր կերպով դիմավորեց կարմիր ջոկատներին»։[1]

Երևանի և մյուս շրջանների աշխատավորությունն իր ազատարարին՝ հերոսական Կարմիր Բանակին, դիմավորեց անհուն ցնծությամբ։

Դաշնակցական ջախջախված բանդաների մնացորդները փախչում են Զանգեզուր։ Շուտով Կարմիր Բանակը իր հաղթական դրոհն է սկսում նաև դեպի Զանգեզուր, որը 1921 թվի հուլիսի կեսերին վերջնականապես ազատագրվում է և մաքրվում կոնտրռևոլուցիոն դաշնակների բանդաներից։

Այսպիսով, Հայաստանը ամբողջությամբ և վերջնականապես մաքրվում է կոնտրռևոլուցիոն ուժերից։ Ավարտվում են քաղաքացիական կռիվները։ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները հնարավորություն են ստանում վերսկսելու ապատ և ստեղծարար աշխատանքները, որոնք ընդհատված էին քաղաքացիական կռիվների պատճառով։

[1] «Известия ВЦИК» № 74, 6 апреля 1921 г., Москва.

Ապրիլի 3-ին հրապարակվում է Հայաստանի Ռևկոմի հրամանը դաշնակների կոնտրռևոլուցիոն իշխանության տապալման մասին։ Հրամանում ասված է.

«Տապալելով Երևանի հակահեղափոխական կառավարությունը, այսպես կոչված Հայրենիքի փրկության Կոմիտեն, և վերականգնելով Հայաստանի բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանությունը հանրապետության լիակատար սահմաններում՝ ՀՍԽՀ Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն հրամայում է.

1. ՀՍԽ Հանրապետության հրապարակած բոլոր դեկրետներն ու հրամանները պահպանում են իրենց ուժը հանրապետության ամբողջ տերիտորիայի վրա։

2. Տապալված հակահեղափոխական կառավարության բոլոր հրամաններն ու կարգադրություններն առ ոչինչ համարել»[1] Նույն հրամանով Սովետական Հայաստանի յուրաքանչյուր Ժողովրդական Կոմիսարիատի վրա պարտավորություն է դրվում սովետական ապարատը ամրապնդելու և երկրի տնտեսության վերականգնման պահանջներին համապատասխան աշխատանքները ծավալելու ուղղությամբ։

Պետական կյանքի նորմալ պայմանների ստեղծման շնորհիվ հնարավոր դարձավ 1921 թվի մայիսին Հայաստանի Ռևկոմը վերակազմել Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի։ Այդ ժամանակ ՌԿ(բ) Պ Կենտկոմի կողմից Հայաստան աշխատանքի էր ուղարկվել Ալ. Մյասնիկյանը (Մարտունի), որը նշանակվեց Ժողկոմսովետի նախագահ։ Հայաստանի Ժողկոմսովետը Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ ծավալուն աշխատանքներ է սկսում երկրի քայքայված տնտեսության վերականգնման համար։

Ի՞նչ վիճակումն էր Հայաստանի ժողովրդական տնտեսությունն այն ժամանակ— վերականգնման շրջանի սկզբում։ Ինչպիսի՞ ժառանգություն էր մնացել սովետական իշխանությանը հին կարգերից։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունն այն ժամանակ գտնվում էր ծայրահեղ քայքայված վիճակում։ Ցարիզմի տիրապետության ժամանակ, շնորհիվ վերջինիս գաղութային ռեժիմի, նա եղել է ամենացածր մակարդակի վրա։ Շաշնակների տիրապետության տարիներին, նրանց ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով Հայաստանի տնտեսությունն էլ ավելի ետ գնաց ու քայքայվեց։ Այդ տեսակետից բնորոշ են հետևյալ թվերը։ Հայաստանի ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը (1926—1927 թ. թ. անփոփոխ գներով) 1913 թվին եղել է 20,7 միլիոն ռուբլի, 1919 թվին՝ դաշնակների տիրապետության ժամանակ՝ 1,7 միլիոն ռուբլի։ Գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը 1913 թվին եղել է 65,8 միլիոն ռուբլի, 1919 թվին՝ 11,3 միլիոն ռուբլի։ 1920 թվին, հայ-թուրքական պատերազմի հետևանքով, երկրի տնտեսության և բնակչության վիճակն էլ ավելի վատթարացավ։

Եթե վերցնենք տնտեսության առանձին ճյուղերը, կտեսնենք հետևյալը։

Հայաստանում տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունը ծայրահեղ քայքայվել էր 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի տարիներին։ Նա հիմնովին կործանվեց դաշնակների տիրապետության ժա-

[1] «Խորհրդային Հայաստան», 1920—1925 թ. թ., ժողվածու, Երևան, 1926 թ., էջ 22։

[2] Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 г. г.), изд. УНХУ, Ереван, 1940 г., стр. 23 и 27.

մանակ։ Աներևակայելի չափով կրճատվել էին ցանքատարածությունները, խոպանացել էր մշակելի հողերի խոշորագույն մասը։ Հողի մշակությունը, կատարվելով ամենահետամնաց գործիքներով, տալիս էր խիստ ցածր արտադրողականություն։ Գյուղատնտեսության այն ճյուղերը, որոնք արդյունաբերական նշանակություն ունեին (բամբակի մշակությունը, գինեգործությունը և անասնապահությունը) նվազագույն չափերի էին հասել։ 1914 թվի համեմատությամբ, 1919 թվին Հայաստանում խոշոր եղջերավոր անասունները նվազել էին 85 տոկոսով, ոչխարները 77 տոկոսով, այծերը 71,7 տոկոսով։[1]

Գյուղում օրըստօրե աճում էր չքավորությունը։ Համատարած սովը աշխատավոր գյուղացիության անբաժան ուղեկիցն էր, իր հետ բերելով համաճարակային հիվանդություններ։ Հողային հարցի լուծման և սովետական իշխանության կողմից մյուս միջոցառումների կենսագործման շնորհիվ չքավոր գյուղացիությունն սկսեց ավելի ամուր կերպով համախմբվել բոլշևիկների պարտիայի և սովետական իշխանության շուրջը։ Միջակ գյուղացիությունն ավելի մոտ կանգնեց սովետական իշխանությանը՝ օժանդակելով նրան։

Սակայն, ինչպես տեսանք, այն ժամանակ Հայաստանում գյուղատնտեսությունը գտնվում էր ամենացածր մակարդակի վրա թե մշակման ձևերով, թե տեխնիկայով և թե բերքատվությամբ։ Վերականգնման շրջանի սկզբում շերտավորումը գյուղում խոշոր չափով զգացնել էր տալիս։ Գյուղատնտեսության մեջ կուլակային տնտեսությունները զգալի տեղ էին բռնում։ Նրանց դեմ մղած պայքարում սովետական իշխանության շուրջն էին համախմբվում չքավորներն ու միջակները։

Վերականգնման շրջանի սկզբում Սովետական Հայաստանի գյուղատնտեսության վիճակը պատկերացնելու տեսակետից բնորոշ է հետևյալ դոկումենտը։

Հայաստանի Ռևկոմի ներկայացուցիչը, ուսումնասիրելով Լոռու գյուղացիության վիճակը, 1921 թվի ապրիլի 14-ին Ռևկոմին ուղղած իր զեկուցագրում նշում է.

«Գյուղացիության գրության մասին ես պետք է հաղորդեմ հետևյալը. աշխատավոր գյուղացիության տնտեսական դրությունը շատ ծանր է։ Անասնապահությունը, որը Լոռում հանդիսանում է բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը, գնում է դեպի անկում։ Անասունները ոչնչանում են կերի բացակայությունից և էպիդեմիկ հիվանդություններից։ ...Գյուղացիները մնացել են առանց նավթի, ապի, և որ գլխավորն է, հնարավորություն չունեն վերականգնելու գյուղատնտեսական գործիքները՝ նյութերի պակասության պատճառով։ ...Պետք է նշել, որ առաջիկա ցանքերի կապակցությամբ կա սերմացուի մեծ պահանջ։ Ինչ վերաբերում է գյուղացիության տրամադրություններին, անշուշտ կա ռևոլուցիոն վերելք, գյուղացիները մասսաներով գալիս են դեպի մեզ՝ մեծ վստահությամբ»։[2]

Դրությունն այդպիսին էր նաև Հայաստանի մյուս շրջաններում։

Հայաստանում նախքան սովետական կարգերի հաստատումը արդյունաբերությունը ևս եղել է ամենացածր մակարդակի վրա։ Եղած մանր-մունր ձեռնարկները բայքայվել էին երկարատև պատերազմի հետևանքով։ Արդյու-

[1] Տես «Խորհրդային Հայաստան», 1920—1923 թ. թ., ժողովածու, էջ 138։
[2] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 100 113, գ. 31, թ. 253։

նաբերական միավորներն են եղել Ալավերդու և Զանգեզուրի պղնձաձուլական գործարանները, որոնք օգտագործվել են օտարերկրյա կապիտալիստների կողմից։ Գինու-կոնյակի գործարանը, պրիմիտիվ տեխնիկայով սարքավորված կաշվի գարծարանը, Երևանի մեխանիկական արհեստանոցը և մի քանի աննշան արհեստանոցներ—ահա նախասովետական Հայաստանի արդյունաբերություն։ Պղնձաձուլական գործարանները դադարել էին աշխատելուց նախքան սովետական իշխանության հաստատումը։ Արդյունաբերական մյուս ձեռնարկները նույնպես կատարյալ անկման էին հասել։

Հայաստանի երկաթուղագիծը, որպես Անդրկովկասյան երկաթուղու մի մասը, առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի, 1918—1920 թ. թ. թուրքական արշավանքների և ազգամիջյան կռիվների հետևանքով ուժեղ չափով քայքայվել էր։ Փշացել էին գծերը, կամուրջները, շոգեքարշերը, վագոնները։ Քայքայվել էր երկաթուղուն սպասարկող ապարատը։ Ամենուրեք երկաթուղային կայարաններում թափված էին փշացած ու վնասված շոգեքարշեր, վագոններ և երկաթուղային այլ գույք։ Միայն Ալեքսանդրոպոլի կայարանում 1921 թվի մայիսին թափված էին վնասված, շարքից դուրս եկած մեծ քանակությամբ շոգեքարշեր և 160 վագոն։ Թուրքական զորքերի վայրագությունների հետևանքով Ալեքսանդրոպոլի դեպոն ամբողջովին ոչնչացվել էր, որի հետևանքով Հայաստանը զրկվել էր վնասված շոգեքարշերի ու վագոնների վերանորոգման հնարավորությունից։

Տնտեսության հիմնական ճյուղերի այդպիսի քայքայվածության և բնակչության ծայրահեղ աղքատության պայմաններում դժվար չէ պատկերացնել առևտրի, ապրանքաշրջանառության և երկրի ֆինանսական դրության վիճակը։ Վերականգնման շրջանի սկզբում, նոր տնտեսական քաղաքականության կիրառումով, սովետական պետական առևտուրը նոր-նոր էր սկսել իր աշխատանքները։ Սակայն փոխանակության ենթակա ապրանքների խիստ պակասության և բնակչության գնողունակության անկման հետևանքով, նա հանդիպում էր մեծ դժվարությունների։ Կոոպերատիվ առևտուրը ևս նոր էր սկսում իր աշխատանքները, հանդիպելով նույնպիսի դժվարությունների, ինչպես սովետական պետական առևտուրը։ Ապրանքաշրջանառության մեջ զգալի տեղ էր գրավում մասնավոր առևտուրը։ Սովետական կառավարության հարկային և վարկային քաղաքականության շնորհիվ ամեն կերպ զարկ էր տրվում պետական և կոոպերատիվ առևտրին, իսկ մասնավոր առևտուրը սահմանափակվում էր։ 1921—1922 թ. թ. առանձնահատուկ նշանակություն է ստանում մանրածախս առևտուրը, որպես նախնական միջոց՝ ապրանքներն ամբողջապես սպառողին հասցնելու և մասնավոր առևտրի դեմ կռվելու համար և այդ պետք է կատարեին պետական և կոոպերատիվ առևտրական կազմակերպությունները։

Երկրի ֆինանսական դրությունը ևս խիստ ծանր էր։ Սովետական իշխանության հաստատման ժամանակ Հայաստանը «հնդեղված էր ահռելի չափերի հասնող թղթադրամներով— 340 միլիոն անդրկովկասյան բոնով և 11 միլիարդից ավելի հայկական չեկերով (դաշնակների կառավարության թղթադրամներով— Ա. Հ.)։ Սակայն այս բոլորի արժեքը խորհրդայնացման բոպեին հավասար էր կլոր թվով միայն 353.000 մինչպատերազմյան ռուբլուս[1]

[1] «Խորհրդային Հայաստան», 1920—1923 թ. թ., ժողովածու, էջ 161։

Դաշնակների փետրվարյան ավանտյուրայի հետևանքով ավելի ծանրացավ երկրի ֆինանսական դրությունը։ Պարտություն կրելով, ավանտյուրիստ դաշնակները հափշտակեցին և իրենց հետ արտասահման տարան՝ պետական բանկում եղած վերջին հարստությունները։ Միայն Երևանի պետական գանձարանից նրանք կողոպտեցին ավելի քան մեկ փութ ոսկի, 750 միլիոն ռուբլի սովետական դրամանիշ և այլ հարստություններ[1]։ Պետական գանձարանը փաստորեն դատարկվել էր։ Իսկ տնտեսության բոլոր ճյուղերը, ինչպես տեսանք, քայքայված վիճակումն էին։

Իսկ ինչպիսին էր բնակչության վիճակը։ Երկրի տնտեսական ծանր կացությունը խիստ կերպով անդրադարձել էր բնակչության դրության վրա։ Այդ ժամանակ Հայաստանում ծայրահեղ պակասություն էր զգացվում հացի, յուղի, մսի, աղի, մանուֆակտուրայի, կոշկեղենի և այլ առաջին պնհրաժեշտության կենսամթերքների ու ապրանքների։ Երկրում կար մոտ 125.000 գաղթականություն։ Աշխատավոր բնակչությունը գտնվում էր ծայրահեղ աղքատության վիճակում։ Գործազրկությունը խոշոր չափերի էր հասնում։ Արտադրական ձեռնարկները նոր-նոր էին սկսում աշխատել։ Բանվորների դրությունը բավականին ծանր էր։ Գյուղում աղքատությունը և կարիքը մասսայական բնույթ էր կրում։ Մթերքներով ապահովված էին միայն կուլակային և ունևոր տնտեսությունները, որոնք իրենց ունեցվածքը ամեն կերպ թաքցնում էին պետությունից։

Հին հասարակությունից մնացած տնտեսական քայքայվածության հետևանքով 1921—1922 թվականներին Հայաստանում դեռևս շարունակվում էր սովը, որն ընդգրկել էր շատ շրջաններ։ Սովից տառապում էր ոչ միայն բազմահազար գաղթականությունը, այլ բնիկ ժողովուրդը։

Այդպիսի պայմաններում, 1921 թվին Սովետական Հայաստանում բորբոքվեցին համաճարակային հիվանդություններ։ Սկզբում տարածվեց խոլերա հիվանդությունը, որն ընդգրկեց մի շարք գավառներ։ Սովետական կառավարության ձեռք առած կտրուկ միջոցառումների շնորհիվ այդ համաճարակը արագությամբ լիկվիդացվեց։ Նրան հաջորդեց բծավոր տիֆը, որը նույնպես արագորեն լիկվիդացվեց։ Սակայն նրանց կրկնվելու հնարավորությունը դեռևս առկա էր, որովհետև տնտեսական քայքայվածությունը և սովը շարունակվում էին։

Այդպիսի իրադրության մեջ Սովետական Հայաստանի կառավարության առաջ հրամայական պահանջ էր դրված՝ երկիրն արագորեն դուրս բերել նման վիճակից և սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ միասին ու նրանց օգնությամբ հաստատ առաջ տանել սոցիալիստական շինարարությունը։ Առաջնահերթ խնդիրներ էին՝ պատերազմի հասցրած վերքերի բուժումը, ժողովրդական տնտեսության՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի վերականգնումը։

Բնորոշելով Անդրկովկասյան բոլշևիկների անելիքները ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում, 1921 թ. հուլիսի 6-ին Վ.Կ(բ)Պ Թիֆլիսի կազմակերպության ժողովում ընկեր Ստալինը «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» զեկուցման մեջ ասել է.

«Այժմ, երբ մենք թևակոխել ենք տնտեսական շինարարության նոր ժա-

[1] Տես Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, 1/111, գ. 128, թ. 3։

մանակաշրջանը, երբ մենք պատերազմից անցել ենք խաղաղ աշխատանքի, «ամեն ինչ պատերազմի համար» հին լոզունգը, բնականաբար, փոխարինվում է «ամեն ինչ ժողովրդական տնտեսության համար» նոր լոզունգով։ Այս նոր շրջանը կոմունիստներին պարտավորեցնում է բոլոր ուժերը նետել տնտեսական ճակատը, արդյունաբերության, գյուղատնտեսության բնագավառը, պարենային գործի, կոոպերացիայի, տրանսպորտային գործի մեջ և այլն։ Որովհետև առանց դրա չկա տնտեսական քայքայումը հաղթահարելու հնարավորություն»։[1]

Հայաստանի բոլշևիկները, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի և ընկեր Ստալինի ցուցումներով, մոբիլիզացրին մեր երկրի բանվորներին ու գյուղացիներին՝ այդ խնդիրների կենսագործման համար։ Քաղաքացիական կռիվների ավարտումից հետո, երբ նոր էին սկսված տնտեսական վերականգնման աշխատանքները, ՀԿ(բ)Պ Կենտկոմը հատուկ կոչ ուղղեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի բոլոր գավառային կոմիտեներին, պատասխանատու աշխատողներին և պարտիայի անդամներին։ «Շնորհիվ մեր ուժերի մաքսիմում լարման,— ասված է կոչում,— անսպառ եռանդի ու ինքնազոհության, հաղթանակով դուրս եկանք քաղաքացիական պատերազմից։ Ներկայումս, երբ պարզորեն ստեղծված է դադար, մեր առաջ ծառացած է երկրի տնտեսական ֆրոնտի կազմակերպման խնդիրը, որը պահանջում է մեզանից անկասկած գերագույն ճիգեր, ուժեր ու աշխատանքի մաքսիմում կենտրոնացում։ Ոչ մի աշխատանք մեզ համար ծանր չէ և նրա կյանքում կիրառելը դժվարին չի լինի...»։[2]

Կենտրոնական Կոմիտեի այդ կոչը, որ ուղղված էր տեղական պարտիական կազմակերպություններին, պահանջում էր բարձրացնել ռևոլուցիոն զգոնությունը, ամրապնդել երիտասարդ սովետական ապարատը իր բոլոր օղակներով, հայտնաբերել և ջախջախել օտարերկրյա իմպերիալիստների գործակալներին— դաշնակներին, մենշևիկներին, էսերներին և մյուս կոնտրռևոլուցիոն թափթփուկներին։ Պարտիայի այդ կոչին բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը պատասխանեցին աշխատանքային խանդավառությամբ։

Տեղական պարտիական կազմակերպությունները, գլխավորելով բանվորների և գյուղացիների աշխատանքային խանդավառությունը տնտեսության վերականգնման գործում, կարճ ժամանակամիջոցում հասան զգալի արդյունքների։ Պարտիական կազմակերպությունների ծավալած աշխատանքի շնորհիվ աշխատավոր գյուղացիությունը ամուր կերպով համախմբվում է սովետական իշխանության ջուրջը։ Այդ ժամանակ, 1921 թվի կեսերին, համարյա բոլոր գավառներում և շրջաններում հրավիրվում են անպարտիական գյուղացիների համագումարներ, որոնք վճռականություն են արտահայտում նվիրված աշխատանքով ու պայքարով ամրապնդել երիտասարդ սովետական իշխանությունը, ամեն կերպ նպաստել քայքայված տնտեսության վերականգնմանը։

1921 թ. հուլիսի 17-ին հրավիրված Բաշ-Գյառնիի շրջանի 50 գյուղերի անպարտիական գյուղացիների համագումարի բանաձևում ասված է.

«Գիտակցելով այն պարզ ճշմարտությունը, որ աշխատավորության ու քրտինք թափող ռանչպարի հանգիստը, նրա անդորրությունը և կուլտուրական

[1] Ի. Ստալին, Երկեր, հատոր 5, էջ 99—100։

[2] Հայկական ՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. 40C 113, գ. 22, թ. 97։

զարգացման գործը խորհրդային իշխանության ամրապնդման մեջ է կայանում. և դրանով միայն ապահովվում է գյուղացիության խաղաղ աշխատանքի ասպարեզը, և որ այդ իրավակարգն իր ծոցից ծնված հարազատ իշխանությունն է. ուստի նա թե ու թիկունք պետք է դառնա այդ կառավարությանը և կհանդիսանա նրա ամենաուժեղ պատվանդանը։

Մեր անձնական եռանդով ու աշխատանքով կվերականգնենք մեր քայքայված երկիրը— կլծվենք շինարարության գործին մեր կառավարության ղեկավարությամբ։ Մենք չենք խնայի մեր ուժերը, մեր կուրծքը դնմ կտանք այն պահանջած ծանր ու անդուլ աշխատանքին, որով պիտի վերաշինվի և կենդանանա մեր հայրենիքը»։[1]

Այսպիսի որոշումներ են ընդունում նաև մյուս շրջաններում հրավիրված աշխատավոր գյուղացիների համագումարները։ Բացի տեղական բնակչությունից, գաղթականությունը ևս արտահայտում է իր կամքը և վճռականությունը ամեն կերպ օգնելու սովետական իշխանությանը տնտեսության վերականգնման գործում։ 1921 թվի մայիսի 21-ին հրավիրվում է Էջմիածնի դավառի գաղթականության համագումարը։ Արտահայտելով բազմաչարչար հայ ժողովրդի ձգտումները, համագումարը միահամուռ կերպով իր բանաձևում արձանագրել է.

«Մենք ի լուր ամենքի հայտնում ենք.

1. Որ հետայսու մեր բոլոր ուժերը— մտավոր, ֆիզիկական թե նյութական— նվիրելու ենք ՀՍԽ Հանրապետությանը.

2. Միայն ՀՍԽ Հանրապետության հարատև գոյության ու ամրապնդման միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իղձերն ու փափագները իրագործված տեսնել.

3. Ներկա ՀՍԽ Հանրապետության ուժեղացման և տնտեսական զարգացման մեջ ենք մենք որոնում տաճկահայ աշխատավորներիս ընկերային ապահովության և նրա ապագա տենչերի իրագործումը.

Կեցցե Հայաստանի աշխատավորությանը խաղաղ աշխատանքի հրավիրող բանվորա-գյուղացիական Հայաստանի ՀՍԽ կառավարությունը»։[2]

Աշխատավոր գյուղացիության համագումարը ողջույնի ջերմ հեռագիր է ուղարկում հայ ժողովրդի ազատարար Վ. Ի. Լենինին, ՀԿ(բ)Պ Կենտկոմին, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի Ռևկոմներին։

Վ. Ի. Լենինին ուղղված հեռագրում ասված է.

«Մոսկվա, ընկեր Լենինին.

Լսելով Հայաստանի Կոմունիստական կուսակցության ներկայացուցչի ղեկուցումը Խորհրդային Ռուսաստանի և նրա քույր Խորհրդային Հայաստանի էության ու նոր կարգերի մասին, սասունցի, մշեցի, ալաշկերտցի, վանեցի և այլ տեղացի Թուրքահայ չքավոր գյուղացիների առաջին համագումարը միաձայն որոշեց հանձինս Ձեզ ջերմ կերպով ողջունել Խորհրդային Ռուսաստանի բանվոր դասակարգին և չքավոր գյուղացիությանը, միաժամանակ ամեն կերպ աշխատել, որպեսզի զորանա և ամրապնդվի մեր շահերի իսկական պաշտպան և մեր միակ փրկարար Խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը։

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. 6/138, գ. 3, թ. 27—28։
[2] Հայկական ՍՍՌ Պետ. Կենտր. Արխիվ, ֆ. 40c/113, գ. 22, թ. 107։

կեցցե կարմիր, մեծ Բանվորա-գյուղացիական Ռուսաստանը։

կեցցե Հայաստանի երիտասարդ խորհրդային հանրապետությունը»[1]

Տնտեսության վերականգնման համար մղվող պայքարի առաջին շրջանում գլխավոր հարցերը մնում էին պարենային ճգնաժամի լիկվիդացումը, սովի վերացումը և բանվորության համար աշխատանքային նորմալ պայմանների ստեղծումը։

Սակայն Սովետական Հայաստանը մենակ իր ուժերով և ներքին միջոցներով այդ անել չէր կարող։ Նրա սեփական ռեսուրսները չէին բավարարում այդ հարցը լուծելու համար։

Պարենային ճգնաժամի լուծման գործում Հայաստանը օգնության մեծ կարիք էր զգում։ Այդ օգնությունը նա կարող էր ստանալ միմիայն Սովետական Ռուսաստանից և մյուս եղբայրական սովետական ռեսպուբլիկաներից։

Մեր ժողովրդի և երկրի զարգացման բախտը սերտորեն կապված է եղել աշխարհում առաջինը սոցիալիստական ռեսպուբլիկայի հաղթական դրոշը բարձրացրած ռուսական հերոսական բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության հետ։

Կենսագործելով Վ. Ի. Լենինի և ընկեր Ստալինի ցուցումները, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իրենց բախտը Սովետական Ռուսաստանի հետ կապել էին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայի համար մղվող պայքարում, նրա առաջին իսկ օրերից։ Դրա անմիջական արդյունքը հանդիսացավ նրանց հերոսական պայքարով Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, պայքար, որը իրականացվեց ռուս մեծ ժողովրդի, նրա փառապանծ 11-րդ բանակի օգնությամբ։ Ռազմական դաշինքի ամրապնդման հետ միասին, որը պահպանվեց, ավելի ամրապնդվեց հետագայում, տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում ավելի ու ավելի մեծ անհրաժեշտություն էր ստանում տնտեսական դաշինքի հարցը, Սովետական Ռուսաստանի կողմից Հայաստանին ցույց տրվող օգնությունն հարցը։

Եվ Սովետական Ռուսաստանը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի ցուցումներով, ինչպես մյուս բոլոր սովետական ռեսպուբլիկաներին, նույնպես Սովետական Հայաստանին այդ դժվարին օրերին ցույց տվեց ամենալայն տնտեսական օգնությունը, մեղմացնելով պարենային ճգնաժամը, սովը և դրանց ծանր հետևանքները։

Այդ ժամանակ Սովետական Ռուսաստանը դեռ նոր էր դուրս եկել քաղաքացիական կռիվներից և գտնվում էր տնտեսական ամենածանր պայմաններում։ Ինչպես ասված է Համկ(բ)Պ Պատմության համառոտ դասընթացում «... 1920 թվին շատ նահանգներ բռնված էին անբերրիությամբ։ Գյուղացիական տնտեսությունը ծանր դրություն էր ապրում։

Էլ ավելի վատ էր քայքայման վիճակում գտնվող արդյունաբերության դրությունը»[2]։

Գտնվելով այդպիսի ծանր դրության մեջ, Սովետական Ռուսաստանը հսկայական նյութական օգնություն ցույց տվեց հայ ժողովրդին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման դեռ առաջին օրերին,

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 40ՀՍ/113, գործ 32, թ. 113։

[2] Համկ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, Երևան, 1938 թ., էջ 333։

1920 թվի դեկտեմբերի 12-ին, ընդունելով Հայաստանի Ռևկոմի անդամներին և լսելով նրանց զեկուցումը երկրի դրության մասին, Վ. Ի. Լենինը ասել է, որ Թուրքիայի հետ բանակցություններ կսկսենք և Ալեքսանդրոպոլն ու երկաթուղին կազատենք. մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց Սովետական Հայաստանին կօգնենք ամեն կերպ։[1]

Վ. Ի. Լենինի կողմից Հայաստանի Ռևկոմի անդամների ընդունելությունից հետո, 1920 թ. դեկտեմբերին, որպես առաջին նյութական օգնություն, Սովետական Ռուսաստանի Ֆինժողկոմատը Հայաստանին բաց է թողնում երկու միլիարդ ռուբլի սովետական թղթադրամ (ոսկու հաշվով 600 հազար ռուբլի, որը Ա. Մռավյանը նույն թվի դեկտեմբերի կեսերին Մոսկվայից բերում է Երևան։- Միաժամանակ Սովետական Ռուսաստանի Պարենժողկոմատն սկսում է Հայաստան ուղարկել մեծ քանակությամբ հացահատիկ, մանուֆակտուրա և այլ կենսամթերքներ։

Ռորժիքների և սերմացուի պակասության հետևանքով 1921 թվի գարնանացանը Հայաստանում կանգնած էր ձախողման վտանգի առաջ։ Նկատի ունենալով այդ, Մոսկվայի բանվորներն այդ ժամանակ օգնության կարգով Հայաստան են ուղարկում մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ։ ՀԿ(բ)Պ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը (հայերեն) Մոսկվայի բանվորների այդ օգնությունը գնահատել է այսպես.

«Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի սերտ համերաշխության և համագործակցության մի փառավոր փաստ է՝ այն նվերը, որ Մոսկվայի բանվորներն իրենց համեստ պահեստներից բաժին են բերում գյուղացիական Հայաստանին։

Հայաստանի աշխատավորությունն արդեն զգում է, որ իր թիկունքում կանգնած վիթխարի Ռուսաստանի անհաղթելի ուժը և այդ հանգամանքը նոր եռանդ պիտի ներշնչի մեր բանվորա-գյուղացիությանը՝ տաքնապատկելու իր ջանքերը շինարարության աշխատանքի ասպարեզում»։[3]

1921 թվի ապրիլին Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետը որոշում է մեկ և կես միլիոն ռուբլի (ոսկով) վարկ բաց թողնել Հայաստանին՝ նրա կարիքները բավարարելու համար։[4]

Խոսելով Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաներին Ռուսաստանի կողմից ցույց տրված օգնության մասին, 1921 թվի հուլիսի 6-ին ՎԿ(բ)Պ Թիֆլիսի կազմակերպության ընդհանուր ժողովում տված իր զեկուցման մեջ ընկեր Ստալինն ասել է.

«Ըմ ստացած տեղեկությունների համաձայն՝ Մոսկվայում օրերս որոշել են մի փոքրիկ օգնություն ցույց տալ Վրաստանին, Հայաստանին և Ադրբեջանին 6,5 միլիոն ռուբլի ոսկու փոխառության ձևով։ Բացի դրանից, ես իմացա, որ Վրաստանն ու Հայաստանը, ինչպես պարզվում է, նավթամթերքներն Ադրբեջանից ձրի են ստանում— մի դեպք, որ աներևակայելի է բուրժուա-

---

1 Տես Հայաստանի Ռևկոմի անդամ Ա. Մռավյանի հիշողությունները, «Խորհրդային Հայաստան» թերթ, № 272, 29 նոյեմբերի, 1923 թ.։

2 Տես նույն տեղում։

3 «Կոմունիստ», № 83, Երևան, 1921 թ., մայիսի 19։

4 Տես Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184ա, թ. 1։

կան, թեկուզ և տխրահռչակ «սրտագին համաձայնությամբ» (Entente cordiale[1]) կապված պետությունների կյանքում։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, որ այդ և դրանց նման ակտերը ոչ թե թուլացնում, այլ ամրապնդում են այդ պետությունների անկախությունը»։[2]

1921 թվի մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը, Սովետական Ռուսաստանից, օգնության կարգով, Հայաստան է ուղարկվել՝ դրամ— 2.545.000 ռ. ոսկով, զանազան տեսակի վառելանյութ— 2.172.000 փութ, մանուֆակտուրա— 1.500.000 արշին, զինվորական զգեստներ— 18.000 կոմպլեկտ, հացահատիկ և ալյուր— 326.000 փութ, շաքար— 5000 փութ, ձուկ— 50.000 փութ, անասուն, գլխավորապես ձի— 1500 գլուխ, մի քանի հարյուր հազար կտոր դիրք, մեծ քանակությամբ տպագրական սարքավորում և գյուղատնտեսական գործիքներ։ Ադրբեջանից Սովետական Հայաստան է ուղարկվել (առանց վճարի) 36.000 վառելանյութ (նավթ, բենզին, մազութ և այլն)։[3]

1922 թվի փետրվարին, Հայաստանի սովետների առաջին համագումարում Հայկական ՍՍՌ կառավարության հաշվետվության մեջ ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանը նշել է, որ 1921 թվի ընթացքում Հայաստանը Ռուսաստանից ստացել է 3,5 միլիոն ռուբլի ոսկով։[4] Նույն համագումարում արձանագրվեց, որ այդ ժամանակամիջոցում Ռուսաստանից Հայաստան են ուղարկվել 2.895.000 փութ կենսամթերքներ և զանազան ապրանքներ։[5]

Ռուս մեծ ժողովրդի և սովետական եղբայրական մյուս ռեսպուբլիկաների եղբայրական այդպիսի օգնությունը վճռական նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի ծանր դրության բարելավման գործում։ Այդ օգնության շնորհիվ սկսվեց օրըստօրե լավանալ երկրի տնտեսական վիճակը։ Վիկվիդացվում էր սովն իր ծանր հետևանքներով։ Վերացվում էին համաճարակային հիվանդությունները։ Բանվորներն ու գյուղացիները նորմալ հնարավորություններ էին ստանում խաղաղ աշխատանքների համար։

Ստեղծված էին անհարժեշտ նախադրյալներ երկրի քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքները լայն մասշտաբներով ծավալելու համար։

ԱՆՑՈՒՄԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմների տարիներին բոլշևիկների պարտիան կիրառելով ռազմական կոմունիզմի քաղաքականություն, ամրապնդեց մեր երկրի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը, ապահովեց սովետական ժողովրդի հաղթանակը։ Այդ ռազմա-քաղաքական դաշինքի

---

1 Նկատի է առնված Անգլիայի և Ֆրանսիայի միջև 1904 թվականին կնքված ռազմա-քաղաքական համաձայնությունը, որը Անտանտան (Անգլիայի, Ֆրանսիայի և ցարական Ռուսաստանի իմպերիալիստական դաշինքը) կազմելու սկիզբ դրեց։ Տես Ի. Ստալին, Երկեր, հատոր 3-րդ, էջ 449։

2 Ի. Ստալին, Երկեր, հատոր 3-րդ, էջ 108—109։

3 Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ. 71։

4 «Խորհրդային Հայաստան», 1920—1925 թթ. թ. ժողովածու, էջ 227։

5 «Խորհրդային Հայաստան» թերթ, № 26, 2 փետրվարի, 1922։

6 «Խորհրդային Հայաստան» թերթ, № 29, 5 փետրվարի, 1922 թ.։

հիմքը հանդիսանում էր այն, որ գյուղացիությունը պրոլետարիատի դիկտատուրայի շնորհիվ ստացավ հող և ամեն տեսակի պաշտպանություն ընդդեմ կալվածատերերի և կուլակների, որոնք ինտերվենտների հետ միացած, պայքարում էին հին կարգերի վերականգնման համար։ Իսկ բանվոր դասակարգը գյուղացիությունից ստացավ հաց և այլ կենսամթերքներ պարենմասնատրման կարգով։ Պարենմասնատրումը պետական մթերումների հատուկ ձև էր, որով գյուղացիական տնտեսությունների ստացած ընդհանուր բերքից նրանց թողնելով անհրաժեշտ պաշար— սննդամթերք, սերմացու,— ամբողջ ավելցուկը սովետական պետությունը պարտադիր կարգով և կայուն գներով վերցնում էր։ Պարենմասնատրման և հացի առևտրի մենաշնորհի կիրառումով պետական պահեստներում խոշոր չափով ավելացավ հացի և գյուղատնտեսական այլ մթերքների քանակը, որը սովետական պետության կողմից օգտագործվեց Կարմիր բանակի և արդյունաբերական կենտրոնների պահանջներն ապահովելու համար։

Բնորոշելով Սովետական Ռուսաստանի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը, Վ. Ի. Լենինը գրել է.

«Սովետական Ռուսաստանում պրոլետարիատի և գյուղացիության կանոնավոր փոխադարձ հարաբերության համար հիմքն ստեղծված է 1917—1921 թվականների դարաշրջանով, երբ կապիտալիստների և կալվածատերերի արշավանքը, աջակցություն գտնելով նաև ամբողջ համաշխարհային բուրժուազիայի, ինչպես և մանր-բուրժուական դեմոկրատիայի (էսերների ու մենշևիկների) բոլոր պարտիաների կողմից, ստեղծեց, ամրապնդեց և ձևակերպեց պրոլետարիատի և գյուղացիության ռազմական դաշինքը հօգուտ սովետական իշխանության»։[1]

Առանց այդպիսի դաշինքի, սովետական իշխանությունը անկարող կլիներ քաղաքացիական կռիվներից հաղթանակով դուրս գալ։

Ինչպես նշել է Ի. Վ. Ստալինը, ռազմական կոմունիզմի ժամանակ սովետական ռեսպուբլիկաները օղակված էին իմպերիալիստական պետությունների կողմից և ներկայացնում էին մի պաշարված ճամբար. երկրի կյանքում ամեն ինչ հարմարեցված էր պատերազմական պահանջներին, սպիտակգվարդիական ուժերի և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող կռվում հաղթանակը ապահովելու գործին։ «... Այդ ժամանակաշրջանում,— գրում է ընկեր Ստալինը,— պարտիան չէր կարող իր ուշադրությունը կենտրոնացնել տնտեսական շինարարության վրա։ Կարելի է առանց չափազանցության ասել, որ սովետական երկրների էկոնոմիկան այդ ժամանակաշրջանում սահմանափակվում էր ռազմական ինդուստրիան զարգացնելով և ժողովրդական տնտեսության մի քանի, դարձյալ պատերազմի հետ կապված ճյուղերը մի կերպ պահպանելով»։[2]

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը լինելով հանդերձ միակ ճիշտ քաղաքականությունը օտարերկրյա ինտերվենտների և քաղաքացիական պատերազմի տարիներին, այդ պատերազմներն հաղթականորեն ավարտելուց

[1] Լենին, Երկեր, հատ. 26, էջ 413, Երևան, 1931 թ.։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատոր 8, էջ 99, Երևան, 1948 թ.։

հետո, նա այլևս չէր համապատասխանում սովետական երկրի խաղաղ զարգացման պահանջներին։

Քաղաքացիական պատերազմներն ավարտելուց հետո գյուղացիությունն սկսեց դժգոհել ռազմական կոմունիզմի քաղաքականությունից, առանձնապես պարենմասնատրումից, պահանջելով, որպեսզի փոխվի այդ քաղաքականությունը, վերացվի պարենմասնատրումը, թույլատրվի հացի ազատ առևտուր և ծավալվի ապրանքափոխանակությունը գյուղի և քաղաքի միջև։

«Գյուղացիական մասսան ընդհանուր առմամբ տեսավ ու հասկացավ,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ այդ ահագին ծանրությունները, որոնք դրվում են նրա վրա, անհրաժեշտ էին, որպեսզի կարելի լիներ բանվորա-գյուղացիական իշխանությունը պաշտպանել կալվածատերերի դեմ, որպեսզի մեզ չխեղդեր կապիտալիստական արշավանքը, որ սպառնում էր խլել ռևոլուցիայի բոլոր նվաճումները։ Բայց զոդում չկար գյուղացիական էկոնոմիկայի և այն էկոնոմիկայի միջև, որը կառուցվում էր ազգայնացված, սոցիալիզացիայի ենթարկված ֆաբրիկաներում, գործարաններում, սովխոզներում»[1]։

Մեր երկրի բանվոր դասակարգը՝ կրելով քաղաքացիական պատերազմի գլխավոր դժվարությունները, պատերազմն ավարտելուց հետո լծվեց խաղաղ տնտեսական շինարարության աշխատանքներին։ Սակայն ռազմական կոմունիզմի տարիներին նրա որոշ խավերի մեջ ևս դժգոհություններ էին առաջացել։ Արդյունաբերական ձեռնարկությունների զգալի մասը չէր աշխատում, իսկ մյուս մասը, աշխատում էր անկանոն։ Աշխատավարձը վճարվում էր ուշացումներով, կար գործազրկություն և աշխատանքը հեշտությամբ չէր ճարվում։ Բանվորները զբաղվում էին տնայնագործությամբ։ Նման պայմաններում «պրոլետարիատի դիկտատուրայի դասակարգային բազան սկսեց թուլանալ, բանվոր դասակարգը փոշիանում էր, բանվորների մի մասը գյուղ էր դնում, գաղարում էր բանվոր լինելուց, ապադասակարգայնանում էր։ Սովի և հոգնածության հողի վրա երևան էր գալիս բանվորների մի մասի դժգոհությունը»։

Այդ բոլորի հետևանքով թուլացել էր բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը։ Դասակարգային թշնամին ջանք չէր խնայում օգտագործելու սովետական իշխանության ներքին դժվարությունները, գյուղացիության և բանվոր դասակարգի որոշ շերտերի մեջ առաջացած դժգոհությունները։ Այդ հողի վրա էլ թշնամուն հաջողվեց Սովետական Ռուսաստանի, Ուկրաինայի և Անդրկովկասի որոշ ռայոններում բարձրացնել կոնտրռևոլուցիոն խռովություններ, որոնք սակայն արագությամբ լիկվիդացվեցին Կարմիր Բանակի կողմից։

Նման պայմաններում բոլշևիկների պարտիան Վ. Ի. Լենինի և ընկեր Ստալինի գլխավորությամբ ձեռնամուխ եղավ տնտեսական շինարարության բոլոր հարցերի վերաբերյալ նոր դիրքավորում մշակելուն, սովետական երկրի կյանքում նոր շրջադարձ կատարելուն։ Անհրաժեշտ էր փոխել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի տնտեսական հիմքերը, ամրապնդել մերձեցումը պետական և անհատական գյուղացիական էկոնոմիկայի միջև։ Անհրաժեշտ էր վերականգնել սոցիալիզմի նյութական հիմքերը՝ խոշոր արդյու-

---

[1] Լենին, Երկեր, հատոր 27, էջ 300—301, Երևան, 1939 թ.։

[2] Համկ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 341։

նաբերությունը, լուծել արդյունաբերության էներգետիկ բազայի, առաջին հերթին երկրի էլեկտրիֆիկացիայի հարցը։

1920 թվի մարտին, բոլշևիկների պարտիայի 9-րդ համագումարը քննության առնելով երկրի տնտեսական դրության բարելավման հարցը, նշեց պարտիայի մերձավորագույն խնդիրներն այդ ուղղությամբ։ Համագումարում Վ. Ի. Լենինի կողմից առաջադրվեց երկրի միասնական տնտեսական պլանի հարցը, որի հիմքը կազմում էր երկրի էլեկտրիֆիկացիան։ Համագումարը առանձնապես նշել է պրոֆմիությունների մասնակցության անհրաժեշտությունը տնտեսական շինարարության գործում։ Վ. Ի. Լենինը և ընկեր Ստալինը պրոֆմիությունները գնահատում են որպես կոմունիստական դաստիարակության դպրոցներ, որպես կոմունիզմի դպրոցներ, որոնց խնդիրն է ակտիվ կերպով մասնակցել սոցիալիզմի կառուցման գործին, ամրապնդել գիտակցական կարգապահությունը և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Առանց պրոֆմիությունների ակտիվ մասնակցության, հնարավոր չէ երկրի տնտեսության վերականգնման դժվարին աշխատանքները։

Հանգես գալով լենինյան դրույթների դեմ, Տրոցկին և Բուխարինը առաջարկում էին պրոֆմիություններում կիրառել միայն ռազմական և հարկադրանքի մեթոդները, հրաժարվել համոզելու, գիտակցականորեն դաստիարակելու մեթոդից։ Վճռական հակահարված տալով տրոցկիստներին, բուխարինականներին և մյուս հակալենինյան ուղղություններին, 1921 թվի հունվարին ընկեր Ստալինը գրել է.

«Մեր տարաձայնություններն ընկած են այն հարցերի բնագավառում, որոնք վերաբերում են բանվոր դասակարգի մեջ աշխատանքային կարգապահությունն ամրացնելու եղանակներին, արդյունաբերության վերածնության գործին ներգրավվող բանվորական մասսաներին մոտենալու մեթոդներին, այժմյան թույլ պրոֆմիությունները հզոր, իսկապես արտադրական, մեր արդյունաբերությունը վերածնելու ընդունակ միությունների փոխարկելու ուղիներին։

Գոյություն ունի երկու մեթոդ— հարկադրանքի մեթոդ (ռազմական մեթոդ) և համոզելու մեթոդ (պրոֆմիութենական մեթոդ)։

... Աշխատողների մի խումբ, Տրոցկու գլխավորությամբ բանակային միջավայրում կիրառած ռազմական մեթոդների հաջողություններից արբեցած, կարծում է, որ կարելի է և պետք է այդ մեթոդները փոխադրել բանվորական միջավայրը, պրոֆմիությունները՝ նույնպիսի հաջողությունների հասնելու համար միությունների ամրացման գործում, արդյունաբերության վերածնության գործում»։[1]

Պրոֆմիությունների հարցի շուրջը եղած դիսկուսիայում հակահարված տալով տրոցկիստներին ու բուխարինականներին, պարտիան հաստատ կերպով գնում էր լենինյան ուղիով։

Հստակորեն նշելով բանվոր դասակարգի, նրա բազմամիլիոն մասսայական կազմակերպությունների՝ պրոֆմիությունների մասնակցության հարցը Երկրի քայքայված տնտեսության վերականգնման գործում, Վ. Ի. Լենինը և ընկեր Ստալինը պարզ ու որոշակի կերպով լուծեցին նաև աշխատավոր գյուղացիության մասնակցության հարցը այդ գործում։

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հատոր 5-րդ, էջ 7—8։ Ընդգծումները բնագրինն են։

Բոլշևիկների պարտիայի 10-րդ համագումարի նախօրյակին, 1921 թվի փետրվարին, կատարված մեծ փորձի և երկրի դրության գիտական խորը վերլուծության հիման վրա Վ. Ի. Լենինը գրել է գյուղացիության վերաբերյալ թեզիսների նախնական սևագիրը, որով հիմնական գծերով տվել է ռազմական կոմունիզմի փոխարեն կիրառվելիք նոր տնտեսական քաղաքականության էությունը։

Այդ թեզիսներում կարդում ենք.

1. «Բավարարել անպարտիական գյուղացիության ցանկությունը՝ մասնատրումը (ավելցուկները [խլելու] վերցնելու իմաստով) հացահատիկային հարկով փոխարինելու մասին։

2. Պակսեցնել այդ հարկի չափը անցյալ տարվա մասնատրման համեմատությամբ։

3. Հավանություն տալ հարկի չափը [տիրոջ] հողագործի փութաջանության [չափին] համապատասխանելու սկզբունքին՝ հողագործի փութաջանության բարձրացման դեպքում հարկի տոկոսն իջեցնելու իմաստով։

4. Ընդլայնել հարկը վճարելուց հետո հողագործի ավելցուկները տեղական տնտեսական շրջանառության մեջ օգտագործելու ազատությունը՝ հարկը արագ և լրիվ մուծելու [կատարումն ավարտելու] պայմանով»։[1]

1921 թ. փետրվարի 24-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի պլենումը հաստատում է Քաղբյուրոյի կողմից առանձնացված հատուկ հանձնաժողովի որոշման նախագիծը՝ պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու մասին, որը մշակված էր Վ. Ի. Լենինի վերոհիշյալ ցուցումների հիման վրա։

ՀամԿ(բ)Պ 10-րդ համագումարը (1921 թ. մարտին) քննության առնելով Վ. Ի. Լենինի զեկուցումն այդ հարցի վերաբերյալ, «կարևորագույն որոշում ընդունեց պարենմասնատրումից պարենհարկին անցնելու մասին, նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ-ի) անցնելու մասին։

Ռազմական կոմունիզմից դեպի ՆԷՊ-ը կատարված այս շրջադարձում արտահայտվեց լենինյան քաղաքականության ամբողջ իմաստությունն ու հեռատեսությունը»։[2]

Համագումարը ընդունեց Վ. Ի. Լենինի բանաձևը պարենմասնատրումից պարենային հարկին անցնելու մասին։ Բանաձևը նշում էր, որ պարենային հարկը ավելի քիչ պետք է լինի, քան եղել է պարենմասնատրումը։ Պարենային հարկը պետք է համապատասխանի գյուղացիական տնտեսությունների եկամուտներին (հաշվի առնելով բերքը, տնտեսության մեջ անձերի քանակը, անասունների քանակը և այլն)։ Այդ հարկը լինելու էր պրոգրեսիվ հարկ։ Չքավոր գյուղացիական տնտեսությունները մասամբ կամ ամբողջովին կարող էին ազատվել պարենային հարկից, իսկ քիչ կարողության տեր կամ միջակ տնտեսությունները հարկը վճարելու էին ցածր դրույքով։

Խոսելով նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու անհրաժեշտության մասին, համագումարում իր տված զեկուցման մեջ Վլադիմիր Իլիչը նշել է, որ ներկայումս գլխավոր հարցը հանդիսանում է խոշոր արդյունաբերության վերականգնումը, խափանված հարյուրավոր գործարանների ու ֆաբրիկաների գործարկումը և երկրի տարբեր մասերում ցրված պրոլետարիատի

[1] Ленинский Сборник, XX, էջ 37–38։
[2] ՀամԿ(բ)Պ Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 330։

համախմբումը, միաձուլումը։ Վ. Ի. Լենինը միաժամանակ ցույց տվեց, որ խոշոր արդյունաբերության վերականգնումը, որից և կախված է ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման գործը, հնարավոր չէ առանց գյուղացիության մասնակցության, առանց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման, որը որոշ չափով թուլացել էր ռազմական կոմունիզմի տարիներին։

Դնելով պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու անհրաժեշտությունը, Վ. Ի. Լենինը միաժամանակ նշել է.

«Նախ՝ հարկավոր է շրջանառության որոշ ազատություն, ազատություն մասնավոր մանր տնտեսատիրոջ համար, իսկ երկրորդ՝ հարկավոր է ապրանքներ ու արդյունքներ ձեռք բերել։ ... Իսկ ի՞նչ բան է շրջանառության ազատությունը։ Շրջանառության ազատությունն առևտրի ազատություն է, իսկ առևտրի ազատություն նշանակում է վերադարձ դեպի կապիտալիզմ։ Շրջանառության ազատություն և առևտրի ազատություն նշանակում է ապրանքային փոխանակություն առանձին մանր տնտեսությունների միջև»։[1]

Այնուհետև Վլադիմիր Իլիչը ցույց է տալիս, որ այդ կապակցությամբ հարկ կլինի թույլատրել մասնավոր արդյունաբերողներին մանր ձեռնարկություններ բաց անելու։ Այդ կնշանակեր հնարավորություն ստեղծել մասնավոր առևտրի և կապիտալի աշխուժության համար։ Սակայն դրանից չպետք է վախենալ, որովհետև «ապրանքափոխանակության որոշ ազատությունը գյուղացու մեջ կստեղծի տնտեսական շահագրգռվածություն, կբարձրացնի նրա աշխատանքի արտադրողականությունը և կհասցնի գյուղատնտեսության արագ բարձրացման, որ այդ հիմքի վրա կվերականգնվի պետական արդյունաբերությունը և դուրս կմղվի մասնավոր կապիտալը, որ, ուժեր ու միջոցներ կուտակելով, կարելի կլինի ստեղծել հզոր ինդուստրիա սոցիալիզմի տնտեսական հիմքը, և ապա վճռական հարձակման անցնել կապիտալիզմի մնացորդները երկրում ոչնչացնելու համար»։[2]

Պարտիան գտնում էր, որ անցնելով նոր տնտեսական քաղաքականությանը, մենք թույլ ենք տալիս որոշ նահանջ՝ թիկունքն ամրապնդելու, ուժերը վերադասավորելու և ավելի լայն մասշտաբներով կապիտալիստական էլեմենտների վրա գրոհելու համար։ Այսպիսով, ՆԷՊ-ը ուներ երկակի բնույթ, մեկ կողմից որոշ, կարճատև նահանջ, կապիտալիստական տարրերի որոշ աշխուժացման թույլտվություն, իսկ մյուս կողմից պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդում, պրոլետարիատի դիկտատուրայի ուժերի վերադասավորություն՝ նոր հարձակման անցնելու, սոցիալիզմի կառուցման ուղղությամբ ավելի մեծ քայլերով առաջ ընթանալու համար։

Այսպիսով, եթե ռազմական կոմունիզմի տարիներին Լենինի-Ստալինի պարտիայի ճիշտ քաղաքականության շնորհիվ ամրապնդվեց մեր երկրի բանվոր դասակարգի և գյուղացիության ռազմա-քաղաքական դաշինքը և դրա հիման վրա ամրապնդվեց հաղթանակը ներքին ու արտաքին թշնամիների դեմ, ապա նոր տնտեսական քաղաքականության անցնելով, մեր պարտիայի

[1] Լենին, Երկեր, հատոր 26, էջ 342—343։
[2] ՀամԿ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 351։

լենինյան-ստալինյան իմաստուն քաղաքականությունը ապահովեց բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր տնտեսական դաշինքը, որը նոր խթան հանդիսացավ սոցիալիզմի կառուցման գործում մեր առաջընթացին։

Այդ ժամանակ պարտիան առանձին սրությամբ առաջ քաշեց առևտրի հարցը, առևտուր անելը սովորելու հարցը։ «Առանց այդ խնդիրը լուծելու, չէր կարելի ապրանքաշրջանառություն ծավալել քաղաքի և գյուղի միջև, չէր կարելի ամրացնել բանվորների և գյուղացիների տնտեսական դաշինքը, չէր կարելի գյուղատնտեսությունը բարձրացնել, արդյունաբերությունը քայքայումից դուրս բերել»։[1]

Տրոցկիստները, բուխարինականները և մյուս հակալենինյան ուղղությունները կատաղաբար հանդես գալով պարտիայի գլխավոր գծի դեմ, ՆԷՊ-ը համարում էին միայն նահանջ։ Պարտիան Վ. Ի. Լենինի և ընկեր Ստալինի գլխավորությամբ վճռական հակահարված տալով տրոցկիստական-բուխարինական թափթփուկներին, հաստատ կերպով իրականացրեց իր վերցրած նոր կուրսը, որը ապահովեց մեր երկրի արագ զարգացումը սոցիալիզմի ուղիով։

Բոլշևիկների պարտիան նոր տնտեսական քաղաքականությունը դիտելով որպես կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջանում միակ ճիշտ քաղաքականություն, հատուկ սրությամբ ընդգծում էր, որ այդ քաղաքականությունն ամենուրեք նույնությամբ, նույն մեթոդներով կիրառել հնարավոր չէ, որ յուրաքանչյուր դեպքում պետք է ելնել տվյալ ռեսպուբլիկայի տնտեսական զարգացման աստիճանից, դրան համապատասխան դասակարգային փոխհարաբերություններից։

Այդ տեսակետից, Հայաստանի բոլշևիկների համար խոշորագույն նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի ծրագրային նամակը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին», որը հրապարակվեց նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու առաջին շաբաթներին, 1921 թվի ապրիլի 14-ին։

Վ. Ի. Լենինն այդ պատմական նամակում հանճարեղ կերպով շարադրեց նոր տնտեսական քաղաքականության իրականացման կոնկրետ ուղիները Անդրկովկասում, որն այն ժամանակ իր զարգացման մակարդակով և մի շարք այլ պայմաններով տարբերվում էր Սովետական Ռուսաստանից։

Այդ տարբերությունը Վլադիմիր Իլիչը նշել է հետևյալ կերպ. ա) Սովետական Ռուսաստանը միայնակ մի քանի տարի կռվել է Անտանտայի դեմ, ոչ մի տեղից չստանալով տնտեսական, քաղաքական և ռազմական օգնություն։ Իսկ Կովկասի սովետական ռեսպուբլիկաները այդպիսի օգնություն ստացել են Սովետական Ռուսաստանից։ բ) Կովկասյան սովետական ռեսպուբլիկաները, Սովետական Ռուսաստանի գոյության շնորհիվ, կարող են ոչ մի վախ չզգալ Անտանտայից, որի ձեռքերը դաղել է Սովետական Ռուսաստանը։ գ) Կովկասը էլ ավելի գյուղացիական երկիր է քան Ռուսաստանը։ դ) Կովկասը կարող է էլ ավելի արագությամբ ապրանքափոխանակություն գլուխ բերել կապիտալիստական Արևմուտքի հետ։

Ընդգծելով, որ Կովկասը ավելի գյուղացիական երկիր է, քան Ռուսաստանը, Վ. Ի. Լենինը նամակում գրում էր, որ Կովկասում սովետական իշխանության պահպանման ու զարգացման համար, անցումը դեպի սոցիալիզմ

[1] Համկ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 356։

յատարելու համար «... Ամենից ավելի կարևոր է, որ Կովկասի կոմունիստներն ըմբռնեն իրենց դրության, իրենց ռեսպուբլիկաների դրության յուրահատկությունը, որը տարբերվում է ՌՍՖՍՌ դրությունից ու պայմաններից, ըմբռնեն մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով այս տակտիկան ձևափոխելու անհրաժեշտությունը, հարմարեցնելով կոնկրետ պայմանների տարբերությանը»:[1]

Նամակում Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին ցուցում էր տալիս, որ տնտեսության վերականգնման աշխատանքները պետք է սկսել գյուղատնտեսությունից, ոռոգումից: «... Բոլոր ուժերով պետք է զարգացնել հարուստ երկրի արտադրողական ուժերը, սպիտակ ածուխը, ոռոգումը։ Ոռոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը, ինչ գնով էլ լինի, բարձրացնելու համար»:[2]

Նամակում Վլադիմիր Իլիչը միաժամանակ ցույց տվեց Կովկասի ժողովուրդների եղբայրական անխախտ դաշինքի անհրաժեշտությունը՝ որպես գլխավոր պայման սովետական իշխանության պահպանման, նրա հզորացման համար, դաշինք, որն անհնարին է բուրժուական տիրապետության ժամանակ։ «Ջերմագին ողջունելով Կովկասի սովետական ռեսպուբլիկաներին,— գրել է նամակում Վ. Ի. Լենինը,— ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ միությունը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և որն անհնարին է բուրժուական հասարակակարգում»։[3]

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով և պարտիայի 10-րդ համագումարի որոշումներով, Հայաստանի բոլշևիկները, դաշնակների փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացիայից հետո, սկսեցին անցումը նոր տնտեսական քաղաքականությանը։ Ինչպես տեսանք 1920 թվի դեկտեմբերից մինչև այդ Հայաստանում կիրառվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը։

«Հայաստանի կոմունիստական կուսակցությունը կրկին ձեռք առնելով իշխանության ղեկը, ապրիլի երկուսից անմիջապես հետո (այսինքն նրևանը դաշնակցական բանդաներից ազատագրելուց հետո— Ա. Հ), մեր տնտեսական բայքայված դրության բարելավումը հայտարարեց հերթական և հարվածային խնդիր։ Երկրի բոլոր մեծ ու փոքր ուժերը՝ կուսակցության և կառավարության բովանդակ աշխատանքը նվիրվեցին տնտեսական քանդված դրության շինարարության, որ տարվեց և տարվում է մեծ եռանդով և մեծ համառությամբ ամենադժվարին պայմաններում, որի բարիքները սկսեց հետզհետե արդեն վայելել երկրի կիսաքաղց, տնտեսական կատարյալ բայքայման եզրը հասած աշխատավորությունը»։[4]

Նոր տնտեսական քաղաքականության անցնելու սկզբնական շրջանում ներքին տնտեսական շինարարության գծով ամենակարևոր և ամենադժվարին հարցերից մեկը 1921 թվի գարնանացանի և բերքահավաքի ապահովման խնդիրն էր։ Չնայած սուղ պայմաններին, սովետական իշխանությունը աշխա-

---

1 Լենին, Երկեր, հատոր 26, էջ 270, ընդգծումը բնագրինն է։

2 Նույն տեղում, էջ 271, ընդգծումը բնագրինն է։

3 Նույն տեղում, էջ 269։

4 Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 1 114, գ. 184, թ. 8։ (Հայկական ՍՍՌ Արտաքին Գործերի ժողկոմ. ինֆորմ. բյուլետեն, 1921 թ.)։

տավոր գյուղացիների որոշ մասին տվեց՝ սերմավարկ, գործիքներ և ֆինանսական օգնություն։ Բերքահավաքի ժամանակ Կարմիր Բանակի շատ զորամասեր օգնության գնացին աշխատավորական գյուղացիական տնտեսություններին։ Հայկական ՍՍՌ Ռազմական Ժողովրդական Կոմիսարիատը հատուկ հրաման է գրում զորամասերի կողմից աշխատավոր գյուղացիությանը օգնություն ցույց տալու մասին։

«Չքավոր գյուղացիությանը՝ հացահատիկներն ու ցանքերը հավաքելու դործում օգնության գալու նպատակով,— ասված է Ռազմական Ժողովրդական Կոմիսարի 1921 թ. հուլիսի 26-ի հրամանում — հրամայում եմ զինվորական բոլոր մասերին, վարչություններին և հիմնարկներին, որ հնարավորության սահմաններում և առանց վնաս պատճառելու զորական պատրաստականության, տան իրենց մոտ եղած ձիերն ու բանող անասունները գյուղական շրջանային հեղկոմներին ըստ նրանց պահանջի, որ վերջիններս այն տան չքավոր գյուղացիներին հացահատիկներն ու ցանքսերը հավաքելու աշխատանքում ժամանակավորապես օգտագործելու համար»։[1]

Այդ աշխատանքներում գյուղացիությանը օգնելու նպատակով Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի հատուկ դեկրետով 1921 թվի մայիսին տեղի է ունենում Կարմիր Բանակում գտնվող մեծահասակ մարտիկների զորացրում։

1921 թվի հունիսի 24-ին հրատարակվում է Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու մասին։ Ըստ այդ դեկրետի Սովետական Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի, որ զբաղվում էր հացահատիկի, տեխնիկական և արդյունաբերական բույսերի մշակությամբ, ինչպես և մեղվաբուծությամբ, անասնապահությամբ ու կենդանաբուծությամբ, պարտավոր էր պետությանը վճարել պարենհարկ՝ պարենմասնատրման փոխարեն։ Պարենհարկը սահմանվեց նվազագույն չափով, որը նպատակ ուներ բարելավել աշխատավոր գյուղացիության դրությունը և ապահովել նրա շահագրգռվածությունը գյուղատնտեսության բարձրացման գործում։ Դեկրետը սահմանեց, որ պարենհարկը պետք է լինի պրոդրեսիվ. «Սահմանված տուրքը պետք է լինի պրոգրեսիվ,— ասված է դեկրետում։ Նա պիտի հավաքվի իբրև մի որոշ տոկոս կամ բաժին տնտեսության ընդհանուր արտադրանքից, իսկ նրա չափը պիտի որոշվի բերքը հաշվարկելով և սպառողների թվով»։[2]

Պարենային հարկը տալուց հետո, գյուղացու տրամադրության տակ էր մնում կենսամթերքների ամբողջ ավելցուկը, որը նա կարող էր ազատ կերպով շուկա հանել։

Ինչպես տեսանք, մասնավոր առևտրի հետ միաժամանակ թույլատրվում էր մասնավոր մանր ձեռնարկների գոյությունը։ Սոցիալիստական տնտեսության կողքին սկսում է որոշ չափով աշխուժանալ մասնավոր առևտուրը, սպեկուլյացիան։ Մավալվում է մրցումը նորի՝ սոցիալիզմի և հնի մնացորդների միջև։ Լենինյան հանճարեղ դրույթները ՆԷՊ-ի մասին պարզորոշ կերպով ցույց էին տալիս, որ այդ մրցման մեջ հաղթանակը պատկանում է սոցիալիզմին։

Նոր տնտեսական քաղաքականության կիրառումով լայն հեռանկարներ

---

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, Ֆ. 4/114, գ 184, թ. 28 29։

[2] Հայկական ՍՍՌ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1921 թ., պրտկ 2-րդ, հոդված 38։

բացվեցին Սովետական Հայաստանի զարգացման համար։ Տնտեսության բոլոր ճյուղերը, առանձնապես քայքայված գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն սկսեցին աշխուժանալ, ծավալվեցին Հայաստանի տնտեսական կապերը Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների ու Սովետական Ռուսաստանի հետ։ Առևտրի, ապրանքափոխանակության աշխուժացումով ամրապնդվեցին գյուղի և քաղաքի կապերը, ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ սոցիալիստական արդյունաբերության հետագա զարգացման համար։

1921 թվի ապրիլ—հուլիս ամիսներին զգալի չափով բարելավվել էր Սովետական Հայաստանի ներքին և արտաքին գրությունը։ Դրանից առաջ՝ փետրվարի 25-ին Վրաստանում հաստատվել էին սովետական կարգեր։ Ապրիլին լիկվիդացվել էր դաշնակների փետրվարյան ավանտյուրան։ Նույն ամսին Ալեքսանդրոպոլից դուրս էին քշվել թուրքական օկուպացիոն զորքերը։ Հուլիսին Կարմիր Բանակը հաջողությամբ ավարտեց դաշնակցական բանդաների ջախջախումը Զանգեզուրում։

Այդպիսի պայմաններում անհրաժեշտություն զգացվեց Հայաստանում իրականացնելու վարչական ռեֆորմ։ Ժողկոմսովետի կողմից առանձնացված կառավարական հատուկ հանձնաժողովը մշակում է Հայաստանի վարչական բաժանման նախագիծը, որը 1921 թվի հուլիսի 20-ին հաստատվում է Ժողկոմսովետի կողմից։ Ըստ վարչական բաժանման դեկրետի, Սովետական Հայաստանը բաժանվեց 9 գավառի՝ Երևանի, Ալեքսանդրոպոլի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Դիլիջանի, Լոռի-Փամբակի, Մեղրիի, Դարալագյազի և Զանգեզուրի։ Գավառներն իրենց հերթին բաժանվեցին գավառակների (շրջանների)։ Բոլոր այդ 9 գավառների մեջ կար 39 գավառակ։ Վարչական այդպիսի բաժանումը սովետական ապարատն ավելի մոտեցրեց մասսաներին, այն ավելի ճկուն և օպերատիվ դարձրեց։ Դրանով իսկ ավելի լավ հիմքերի վրա դրվեց աշխատավորական մասսաների ղեկավարությունը, ռեսպուբլիկայի բանվորների և գյուղացիների լայն մասնակցությունը տնտեսության վերականգնման աշխատանքներին։

Գնալով ամրապնդվում էր Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների տնտեսական, քաղաքական և ռազմական դաշինքը։

1921 թվի ապրիլին Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի միջև տեղի է ունենում համաձայնություն Անդրկովկասյան երկաթուղիների միավորման մասին։ Այդ համաձայնության առաջին կետում ասված է.

«Շահագործման ենթակա բոլոր երկաթուղիները, որ անցնում են Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Սոցիալիստական ռեսպուբլիկաների սահմաններում, միավորվում են Անդրկովկասյան ռեսպուբլիկաների երկաթուղիների մեկ ընդհանուր ցանցի մեջ։

Անդրկովկասյան ռեսպուբլիկաների երկաթուղիների ամբողջ ցանցը,— ասված էր երկրորդ կետում,— ղեկավարում է Անդրկովկասյան ռեսպուբլիկաների երկաթուղիների մեկ վարչությամբ, որի տեղը հանդիսանում է Թիֆլիսը և որի կոմիսարը մտնում է Անդրկովկասյան Ռեսպուբլիկաների Տնտեսական Սովետի մեջ ընդհանուր հիմունքներով։[1]

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 40ր/113, գ. 3, թ. 2։

Այդ համաձայնությունը խոշոր չափով նպաստեց տնտեսական փոխհարաբերությունների ամրապնդմանը մեկ կողմից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև, մյուս կողմից՝ այդ ռեսպուբլիկաների ու Սովետական Ռուսաստանի միջև։ Դրանից հետո արագ թափով սկսում է Երևան—Ալեքսանդրոպոլ երկաթգծի և Ալեքսանդրոպոլի երկաթուղային դեպոյի վերանորոգումը, որը հնարավոր չէր կատարել միայն Սովետական Հայաստանի սուղ միջոցներով։ Վերականգնվում է երկաթուղային կանոնավոր երթևեկությունը Երևան—Թիֆլիս—Բաքու և Երևան—Ջուլֆա գծերով։

Վերացվում են տնտեսական սահմանները և մաքսատները Անդրկովկասյան Սովետական ռեսպուբլիկաների, ինչպես նաև այդ ռեսպուբլիկաների ու Սովետական Ռուսաստանի միջև։

«Տնտեսության բարելավման գործում,— ասված է Հայկական ՍՍՌ Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի 1921 թ. հուլիսի 5-ի բյուլետենում,— երկրորդ կարևոր ազդակը եղավ տնտեսական սահմանների վերացումը Կովկասյան հանրապետությունների և Ռուսաստանի միջև... Մայիսի 13-ին կայացած համաձայնությամբ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սահմանների միջև գտնվող մաքսատները և պարենարգել խմբերը վերացված են»։[1]

Դրանից հետո տեղի է ունենում Անդրկովկասյան երեք ռեսպուբլիկաների արտաքին առևտրի միացումը։ Ապրանքների փոխանակումը, նրանց իրացումը արտաքին շուկայում միասնաբար և նպատակահարմար կատարելու համար Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի սովետական ռեսպուբլիկաները 1921 թվի հունիսի 2-ին Բաքվում կնքում են պայմանագիր արտաքին առևտրի միավորման մասին։ Պայմանագրում ասված է.

«1. Որպեսզի բոլոր արտաքին շուկաներում նպատակահարմար կազմակերպվի ապրանքների փոխանակումը և ռեալիզացիայի ենթարկվեն արտահանության բոլոր աղբյուրները, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի սոցիալիստական հանրապետությունները հաստատում են արտաքին առևտրի համար միավորված մի մարմին, որը կոչվում է «Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Միություն արտաքին առևտրի համար»։ Միության կենտրոնն է Թիֆլիսը։

2. Միության բոլոր գործերը ղեկավարելու և կառավարելու համար պայմանավորվող հանրապետությունների հատուկ որոշումով ընտրվում է միասնական վարչություն»։[2]

1921 թվի գարնանացանը ավարտելուց հետո, ռեսպուբլիկայում սկսվում են նախապատրաստական աշխատանքները պարենային հարկի գանձման ուղղությամբ։ Հայաստանի բոլշևիկները, խոշոր կարևորություն տալով այդ գործին, մոբիլիզացնում են բոլոր ուժերն ու հնարավորությունները՝ այն հաջողությամբ իրականացնելու համար։ Ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքի միջոցով գյուղացիությանը բացատրվում է նոր տնտեսական քաղաքականության իմաստը և նշանակությունը, պարենային հարկի տարբերությունը պարենմասնատրումից, ցույց տալով սովետական իշխանության

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4, 114, գ. 184, թ. 7։
[2] «Խորհրդային Հայաստան», № 104, 1921 թ. 12 հուլիսի։

հոգատարությունը գյուղատնտեսության վերականգնման ուղղությամբ, չքավոր և միջակ տնտեսությունների վերաբերյալ։

Աշխատավոր գյուղացիությունը հասկանալով այդ, ավելի սերտ կերպով համախմբվում է սովետական իշխանության շուրջը։

Պարենային հարկի գանձման 1921 թվին նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ Հայկական ՍՍՌ Արտաքին Գործերի Ժողկոմատի վերոհիշյալ ինֆորմացիոն բյուլետենում ասված է.

«Կուսակցական և պետական լավագույն ուժերը նվիրված են այժմ այդ գործի հաջող կատարմանը, որը ներկայացնում է հարվածային ֆրոնտ։ Գավառներում և գավառամասերում կազմված են համապատասխան հանձնախմբեր՝ պարենաուրքը կանոնավոր հավաքելու համար։

Գյուղացիության վերաբերմունքը դեպի պարենտուրքը միանգամայն լավ է։ Տուրքը գանձվում է առանց դժվարությունների։ Գյուղացիությունը լավ է ըմբռնել պարենտուրքի հաջող վերջավորության անհրաժեշտությունը պետության համար»։[1]

1921 թվի նոյեմբերի 25-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը բամբակագործության մասին։ Երկրում բամբակագործության զարգացմանը խթանելու նպատակով, դեկրետը վերացված համարեց բամբակի պետական մենաշնորհը և 1922 և 1923 թվերին բամբակագործներին ազատեց պարենտուրքից, թույլատրեց ընդհանուր նորմաներից դուրս ազատ հողաբաժիններ ունենալ և վարկեր ստանալ։

ՆԷՊ-ին անցնելու հենց առաջին շրջանում, բոլշևիկների պարտիայի և սովետական իշխանության ձեռք առած միջոցառումների շնորհիվ միջակ գյուղացիությունը վճռական շրջադարձ կատարեց դեպի սովետական իշխանությունը։ Դրան նպաստեցին հետևյալ հանգամանքները. ա) սովետական իշխանությունը կարողացավ վերջնականապես լուծել հողային հարցը, որի համար գյուղացիությունը երկար ժամանակ պայքարել էր։ Նա աշխատավոր գյուղացիությանը ապահովեց հողով։ «Հոկտեմբերյան ռևոլուցիան,— ասում է ընկեր Ստալինը,— ոչնչացրեց հողի մասնավոր սեփականությունը, ոչնչացրեց հողի առուծախը, հաստատեց հողի նացիոնալիզացիան։ Այս ի՞նչ է նշանակում։ Այս նշանակում է, որ գյուղացին հաց արտադրելու համար բոլորովին կարիք չունի հող գնելու։ Առաջներում նա տարիներով միջոցներ էր կուտակում, որպեսզի հող ձեռք բերի, պարտքերի տակ էր ընկնում, ստրկացման էր դիմում, միայն թե հող ձեռք բերի»[2] բ) Սովետական իշխանության խաղաղասիրական հետևողական քաղաքականությունը, որով աշխատավոր գյուղացին հնարավորություն ստացավ զբաղվելու իր քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքներով։ գ) Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով, սովետական իշխանությունը կազմակերպեց ամենալայն օգնությունը աշխատավոր գյուղացիության նկատմամբ։ Պետության կողմից գյուղացիներին տրվեց սերմացու, վարկ, գյուղատնտեսական գործիքներ։ դ) Պարենմասնատրման փոխարինումը պարենհարկով, այդ հարկի պրոգրեսիվ բնույթը։ Սովետական իշխանության հարկային քաղաքականությունն այնպիսին էր, որ դնալով հարկի տեսակարար կշիռը գյուղատնտեսության

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ. 34։
[2] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, 11-րդ հրատ., էջ 881։

ընդհանուր արտադրանքի մեջ նվազում էր, հօգուտ աշխատավոր գյուղացիության, ե) Գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների սովետական քաղաքականությունը, որի նպատակն էր մոտեցնել մկրատի ծայրերը, ամրապնդել բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Սակայն վերականգնման շրջանի սկզբում գյուղատնտեսության զարգացմանը արգելակում էին մի շարք դժվարություններ։ Հայաստանում գյուղատնտեսությունը խիստ հետամնաց էր։ Մշակության գործիքները պրիմիտիվ էին, ցանքերը կատարվում էին առանց պարարտացման, առանց սերմազրտման։ Ոռոգման սիստեմն ամբողջությամբ քայքայված էր։ Դրան համապատասխան էլ ստացվում էր ամենացածր բերք։ Փոխանակությունը քաղաքի և գյուղի, ինչպես և առանձին շրջանների միջև բավականին թույլ էր։

Հաղթահարելով այդ դժվարությունները, գյուղը աստիճանաբար առաջ էր շարժվում։

Այդ ժամանակ բոլշևիկների պարտիայի, սովետական պետության առաջ բավականին լուրջ խնդիր ծառացավ— նախատեսել գյուղատնտեսության զարգացման հետագա ուղիները և նշել միջոցառումներ սոցիալիզմի հաղթանակը գյուղում ապահովելու համար։

Այդ ուղին ուրվագծեց Վլադիմիր Իլիչ Լենինը իր հայտնի հոդվածում կոոպերացիայի մասին, որը հրապարակվեց 1923 թվի սկզբներին։ Այդ պատմական հոդվածով Վ. Ի. Լենինը նշեց գյուղի զարգացման ուղին սոցիալիզմի ճանապարհով, տվեց աշխատավոր գյուղացիության դերը սոցիալիզմի կառուցման գործում։ Որ կոոպերատիվ պլանում Լենինը մատնանշում էր, որ առանց գյուղացիական մանր տնտեսությունների կոոպերացման, առանց գյուղացիական տնտեսությունների արտադրության միջոցների հանրայնացման և առանց կոլեկտիվ աշխատանքի ու առաջավոր տեխնիկայի, հնարավոր չի լինի գյուղն առաջ տանել սոցիալիզմի ուղիով։ Ըստ որում կոոպերացումը պետք է իրականացվեր սկզբում սպառման բնագավառում, իսկ հետո գյուղատնտեսության մթերքների արտադրության բնագավառում։

Գյուղատնտեսության հետագա զարգացման վերաբերյալ ունենալով այդպիսի պարզորոշ դրույթներ, պարտիան ՆԷՊ-ի պայմաններում հաստատ կերպով շարունակում էր արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնման աշխատանքները, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելով Վ. Ի. Լենինի կոոպերատիվ պլանի իրականացման համար։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի դրույթներով, այդ ժամանակ Հայաստանի գյուղատնտեսության մեջ հիմք է դրվում սպառողական, արտադրական և վարկային կոոպերացիային։ Սովետական իշխանությունը գյուղատնտեսական բանկի միջոցով կոոպերացիայի մեջ ընդգրկված գյուղացիներին բաց էր թողնում վարկ՝ գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, լծկաններ ձեռք բերելու համար։ Վարկ էր բաց թողնվում նաև առանձին աշխատավորական տնտեսություններին, բայց միշտ առաջնությունը տրվում էր կոոպերացիային։ 1923—24 տնտեսական տարում Հայաստանում Գյուղատնտեսական բանկի բաց թողած վարկի 32,5 տոկոսը տրվել է կոոպերացիային, որի մեջ ընդգրկված էր աշխատավոր գյուղացիության միայն փոքրիկ մասը (մեկ տոկոսից էլ պակաս)։ Հետագա տարիներին ավելի ու ավելի է մեծացել պետական օգնությունը գյուղատնտեսական կոոպերացիային։

Առաջին խոշոր քայլերն են կատարվում առևտրական-սպառողական կոոպերացիայի ընդարձակման ուղղությամբ։ Բոլոր կոոպերատիվները միավորվում են Հայկոոպի մեջ։ Նրա առաջ խնդիր է դրվում ամեն կերպ նպաստել ապրանքափոխանակության ծավալմանը քաղաքի և գյուղի միջև, պայքարելով սպեկուլացիայի դեմ։

1921 թվի օգոստոսի 10-ին հրապարակվում է Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը տնայնագործությանը և մանր արդյունաբերությանը օժանդակելու միջոցառումների մասին։ Դա նոր պայմաններ է ստեղծում տնայնագործության և տնայնագործական կոոպերացիայի զարգացման համար։ «Կոոպերատիվ միություններին,— ասված է դեկրետում,— ինչպես և մանր ձեռնարկություններին թույլատրվում է փոխադրել ու ապրանքներ վաճառել Հայաստանի Հանրապետության ամբողջ տերիտորիայում՝ իրենց արտադրած նյութերից»։[1] Դեկրետը սովետական տեղական մարմինների վրա պարտավորություն է դնում ամեն կերպ աջակցել տնայնագործներին, նրանց կոոպերատիվ միություններին՝ իրենց արդյունաբերության համար անհրաժեշտ հումույթի հայթայթման գործում, յուրաքանչյուր դեպքում առավելություն տալով կոոպերատիվ միություններին՝ մասնավոր արհեստավորների և ձեռնարկների համեմատ։

Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի 1921 թ. օգոստոսի 14-ի դեկրետով Ժողովրդական տնտեսության Գերագույն Խորհրդին կից հիմնվում է կոոպերացիայի, տնայնագործության և մանր արդյունաբերության վարչություն։ Այդ վարչության վրա խնդիր է դրվում նպաստել կոոպերացիայի, տնայնագործության և մանր արդյունաբերության զարգացմանը, այն ծառայեցնելով սոցիալիստական տնտեսության շահերին։[2]

Նկատի ունենալով կոոպերատիվ շարժման հաջողությունները և կարևոր դերը ժողովրդական տնտեսության վերականգնման գործում, Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետը, ի զարգացումն 1921 թ. հունիսի 3-ի դեկրետի, նոր դեկրետ է հրատարակում (նույն թվի նոյեմբերի 24-ին) միասնական կոոպերացիայի մասին։ Դեկրետում ասված է.

«Հայաստանի կոոպերատիվ շինարարության հիմքում դնել միասնական կոոպերացիայի սկզբունքը, որ նպատակ ունի համախմբել գյուղի և քաղաքի մանր աշխատավորական արտադրողներին, յուրացնելով սպառողական գյուղատնտեսական ու արդյունաբերական կոոպերացիայի գործունեությունները»։[3]

Դեկրետը նախատեսնում էր ամեն կերպ աջակցել մանր արտադրողներին կոոպերացիայի մեջ համախմբելուն, որի համար հանձնարարվում է պետական կազմակերպություններին. ա) պատվերը տալ կոոպերատիվներին՝ նրանց առավելություն տալով մասնավորի նկատմամբ, բ) պետական հում նյութից, արտադրական գործիքներից, սերմացուից, ինչպես նաև դրամական միջոցներից ավանսավորել կոոպերատիվ ընկերություններին, գ) մասնավոր անձանց նկատմամբ կոոպերատիվներին առավելություն տալ գործիքներ, շենքեր ձեռք բերելու և այլ խնդիրներում։[4]

---

[1] Հայկական ՍՍՌ Դեկրետների և հրամանների ժողովածու, 1921 թ., № 2, էջ 10։
[2] Նույն տեղում, № 4, էջ 28։
[3] Նույն տեղում, № 13, էջ 133։
[4] Նույն տեղում։

Սովետական իշխանության հաստատման առաջին օրերից մինչև 1921 թվի հունիսը, Հայաստասի կոոպերատիվ առևտրի կենտրոնը— Հայկոոպը համարվում էր Պարենժողկոմատի բաժիններից մեկը և գերազանցապես կատարում էր բաշխման ու մատակարարման դերը։ Նոր տնտեսական քաղաքականության անցնելուց հետո, Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի 1921 թվի հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի դեկրետներով Հայկոոպը և մյուս կոոպերատիվ առևտրական կազմակերպությունները դառնում են ինքնուրույն և սկսում են ակտիվ գործարքներ առևտրի, փոխանակման և արտադրության գծով։ 1921 թվի վերջերին Հայաստանում կոոպերատիվ առևտրի ցանցը ընդգրկում էր 121 միավոր։

1922 թվի սեպտեմբերին կազմակերպվում է Հայպետառը (հետագայում վերանվանվեց Հայառ), որի առաջ խնդիր էր դրված միավորել Սովետական Հայաստանի ամբողջ պետական առևտուրը, լայնորեն ծավալել այն և շուկայից աստիճանաբար դուրս մղել մասնավոր առևտրականներին— սպեկուլյանտներին։

1921—1923 թվերին Սովետական Հայաստանում զգալի աշխատանքներ են կատարվում ոռոգման ուղղությամբ։ Պետության ձեռնարկած միջոցառումների և այդ գործում աշխատավոր գյուղացիության ակտիվ մասնակցության շնորհիվ նախկինում գոյություն ունեցած ոռոգման ցանցն այդ թվերին հիմնականում վերականգնվում է։ Ոռոգելի տարածությունները 1922 թվին հասնում են նախապատերազմյան ոռոգելի տարածությունների 90 տոկոսին։ 1922 թվի նոյեմբերին տեղի է ունենում Շիրակի ջրանցքի շինարարության հանդիսավոր հիմնադրումը։

Այդ տարիներին սկսվում են Երևանի էլեկտրոկայանի ընդարձակման և նորերի կառուցման նախապատրաստական աշխատանքները։

Զգալի քայլեր են կատարվում քայքայված արդյունաբերության վերականգնման ուղղությամբ։ Ռեսպուբլիկայում տնտեսական շինարարությանը պարկ տալու նպատակով 1921 թվի հոկտեմբերին Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից կազմակերպվում է Տնտեսական խորհրդակցություն, որը միավորում է և սկսում է ղեկավարել ռեսպուբլիկայի բոլոր տնտեսական հաստատությունների գործունեությունը։ 1921—22 թվերին կարգի են բերվում և սկսում են աշխատել Երևանի գինու-կոնյակի «Արարատ» գործարանը, երկու կաշեգործարանները, մեքենայական գործարանը։ Սովետական Ռուսաստանից ստացված սարքավորումներով սկսում է ընդարձակվել տպագրական արդյունաբերությունը։ 1922 թվին Իվանովո-Վոզնեսենսկի քաղաքի բանվորներից նվեր է ստացվում տեքստիլ գործարանի սարքավորում, որը հիմնադրվում է Ալեքսանդրոպոլում՝ հանդիսանալով Սովետական Հայաստանի երիտասարդ արդյունաբերության առաջին ձեռնարկներից մեկը։ Նախապատրաստական աշխատանքներ են կատարվում կարգավորելու և գործարկելու Ալավերդու և Ջանգեզուրի հանքերը, պղնձաձուլական գործարանները։

Բոլշևիկների պարտիայի և սովետական իշխանության ձեռք առած միջոցների շնորհիվ 1921 թվի վերջերին՝ 1922 թվի սկզբներին որոշ չափով մեղմացել էր երկրի պարենային ծանր վիճակը։ Գնալով, ավելի ու ավելի կայունանում էր Սովետական Հայաստանի ներքին դրությունը, բարելավվում էին բնակչության նյութական պայմանները։

1921 թվին Հայաստանում լայն չափով ծավալվում է պրոֆ. շարժումը։

Սովետական կարգերի հաստատումից հետո կազմակերպվում են մի շարք պրոֆմիութիւններ, որոնց մի մասը փետրվարյան ավանտյուրայի հետևանքով դադարում են գոյություն ունենալուց։ Այդ ավանտյուրայի ջախջախումից հետո, Հայաստանի բոլշևիկների ղեկավարությամբ քայքայված պրոֆմիութիւնները սկսում են վերականգնվել, կազմակերպվում են նորերը։ 1921 թվի կեսերին Հայաստանի գավառներում արդեն կազմակերպված էին պրոֆբյուրոներ, որոնք պրոֆմիութիւնների շարքերում ընդգրկել էին հազարավոր աշխատավորներ։ Հայաստանում 1921 թվի օգոստոսին, Հայաստանի պրոֆեսիոնալ միութիւնների առաջին համագումարի ժամանակ, պրոֆմիութիւնների մեջ ընդգրկված էին մոտ 16000 աշխատավորներ։

Դա մի խոշոր բանակ էր, որը բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ լծված էր ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։

Նույն թվի օգոստոսի 20—24-ը Երևանում տեղի է ունենում Հայաստանի պրոֆմիութիւնների առաջին համագումարը, որին մասնակցում էին 198 դելեգատներ։ Հակառակ տրոցկիստական-նացիոնալիստական թափթփուկների փորձերի, որոնք ցանկանում էին պրոֆմիութիւնները հակադրել պարտիային, համագումարը վճռական հակահարված է տալիս նրանց և հայտնում է իր պատրաստակամությունը բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ էլ ավելի ուժեղացնելու աշխատանքը ժողովրդական տնտեսության վերականգնման համար։ Պրոֆեսիոնալ, տնտեսական շինարարության վերաբերյալ իր մի շարք որոշումներով համագումարը ամուր հիմքերի վրա դրեց պրոֆշարժումը Հայաստանում, կոնկրետ կերպով նշեց պրոֆմիութիւնների խնդիրները տնտեսության վերականգնման գործում։

Այդ համագումարից հետո պրոֆմիութիւնների աշխատանքները նոր թափ ստացան։ Զգալի գործ է կատարվում պրոֆմիութիւնների ամրապնդման, նրանց անդամների կողմից դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունք ունենալու, աշխատանքային կարգապահության ամրապնդման բնագավառներում։ Բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ պրոֆմիութիւններն էլ ավելի ակտիվ կերպով լծվեցին ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։

Նոր տնտեսական քաղաքականության կիրառման շնորհիվ 1921 թվի վերջին արդեն որոշակի կերպով զգացվում էր Սովետական ռեսպուբլիկաներում առաջացած բեկումը։ «Պարտիան տնտեսական ֆրոնտում բեկում առաջ բերեց։ Գյուղատնտեսությունը շուտով առաջ շարժվեց։ Արդյունաբերությունն ու տրանսպորտը ձեռք բերին առաջին հաջողությունները։ Սկսվեց առայժմ դեռ շատ դանդաղ, բայց հաստատ տնտեսական վերելք։ Բանվորներն ու գյուղացիները զգում և տեսնում էին, որ պարտիան ճիշտ ճանապարհի վրա է դանգնած»։[1]

Այդ բոլորի շնորհիվ, գնալով ավելի էր ամրապնդվում դաշինքը բանվոր դասակարգի և գյուղացիության միջև, ուժեղանում էր պրոլետարիատի դրկտատուրան։

1921 թվի վերջերին հաստատ կերպով ամրապնդվեց նաև Սովետական Հայաստանի արտաքին դրությունը։

Քեմալական Թուրքիան չդադարելով Անդրկովկասի նկատմամբ իր նվաճողական ձգտումներից, ակտիվ փորձեր էր կատարում Անդրկովկասի նախ-

[1] Համ(բ)Պ Պատմություն, Համառոտ դասընթաց, էջ 355։

կին բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների— դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների հետ կնքված պայմանագրերը գործողության մեջ պահելու ուղղությամբ։ Սովետական Հայաստանի նկատմամբ նա մեծ ջանքեր էր գործադրում իրագործելու 1920 թվի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրոպոլում Թուրքիայի և դաշնակների միջև կնքված պայմանագիրը։

Հայաստանի սովետական իշխանությունը, հակառակ Թուրքիայի կառավարության պահանջներին, հրաժարվեց ճանաչելու Ալեքսանդրոպոլի պայմանագիրը թե իրավաբանական և թե փաստական առումով։ Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1921 թվի մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագիրը հաստատելով սովետա-թուրքական սահմաններն Անդրկովկասում, կրկին անգամ ընդգծում էր Ալեքսանդրոպոլի պայմանագրի անընդունելի լինելը։

Այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի ներքին և միջազգային դրությունը ակնառու կերպով ամրապնդվել էր։ Արդեն ավարտվել էին քաղաքացիական կռիվները հերոսական Կարմիր Բանակի և սովետական ժողովրդի պատմական մեծ հաղթանակներով։ Սովետական Ռուսաստանի հաղթանակները քաղաքացիական կռիվներում ցույց տվեցին նոր իշխանության՝ պրոլետարիատի դիկտատուրայի կենսունակությունն ու անպարտելիությունը։ Այդ հաղթանակով միաժամանակ ամրապնդվեց Անդրկովկասյան Սովետական ռեսպուբլիկաների ներքին և միջազգային դրությունը, ռեսպուբլիկաներ, որոնք իրենց բախտը կապել էին ռուս մեծ ժողովրդի հետ։ Թուրքիան ամեն կերպ ձգտում էր պայմանագիր կնքել Անդրկովկասյան սովետական ռեսպուբլիկաների հետ առանձին-առանձին։ Սակայն այդ նրան չհաջողվեց։

Այդպիսի իրադրության մեջ 1921 թվի հոկտեմբերի 12-ին, Կարսում, Սովետական Ռուսաստանի մասնակցությամբ, մեկ կողմից Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկաների, մյուս կողմից Թուրքիայի միջև կնքվում է պայմանագիր։ Այդ պայմանագիրը հիմնականում համապատասխանում էր նույն թվի մարտի 16-ին Մոսկվայում Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրին։

«Թուրքիայի ազգային մեծ ժողովի մեծ կառավարությունը,— ասված է Կարսի պայմանագրի առաջին հոդվածում,— և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի խորհրդային հանրապետությունների կառավարությունները համարում են ոչնչացված և ուժը կորցրած այն բոլոր դաշնագրերը, որոնք կապվել են (կնքվել են— Ա. Հ.) դաշնագրվող կողմերի տերիտորիաների վրա անցյալում գերիշխանություն բանեցնող կառավարությունների միջև այդ տերիտորիաների վերաբերյալ, նմանապես այն դաշնագրությունները, որոնք կապվել են երրորդ պետությունների հետ և որոնք վերաբերում են Անդրկովկասյան հանրապետություններին»։[1]

Կարսի պայմանագրով վերջնականապես ոչնչացված համարվեց 1920 թվի դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, որի վրա Թուրքիան մեծ հույս ուներ։ Սանձահարվեցին Թուրքիայի զավթողական տենդենցները։

Գնահատելով Կարսի պայմանագրի նշանակությունը, Ս. Օրջոնիկիձեն ասել է.

«... Թուրքիայի հետ միասնական պայմանագրի կնքումը մի ավելորդ անգամ ապացուցում է, որ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը հանդես

[1] Հայկական ՍՍՌ Պետ. կենտր. Արխիվ, ֆ. 4/114, գ. 184, թ. 53։

են գալիս որպես մի ամբողջություն, որպես մեկ եղբայրական ռեսպուբլիկա»։[1]

Սակայն Հայաստանին և Վրաստանին պատկանող անվիճելի տերիտորիաների զգալի մասը դեռևս շարունակվում էր մնալ Թուրքիայի ձեռքում, որը նա նվաճել էր դեպի Անդրկովկաս իր վերջին երկու արշավանքների ժամանակ 1918—1921 թվականներին։

1921 թվի նոյեմբերին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները նախապատրաստվում էին տոնելու երկրում սովետական կարգերի հաստատման առաջին տարեդարձը։ Այդ կապակցությամբ ռեսպուբլիկայի բոլոր գավառներում, շրջաններում, քաղաքներում ու գյուղերում սկիզբ է առնում աշխատանքային խանդավառություն։ Նույն թվի նոյեմբերի 16-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի դեկրետը— նոյեմբերի 29-ը՝ 1920 թվին դաշնակների բուրժուա-նացիոնալիստական կառավարության տապալման և Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրը,— Հայաստանի բանվորների և գյուղացիների համաժողովրդական տոն հայտարարելու մասին։

Նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորները մեծ խանդավառությամբ տոնում են իրենց ազատագրության տոնը։ Ամենուրեք բոլոր արտադրական ձեռնարկներում, հիմնարկներում, գյուղերում հրավիրվում են աշխատավորների ժողովներ, ուր նրանք ծանոթանում են սովետական իշխանության գոյության առաջին տարում բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ Հայաստանում ձեռք բերված հաջողություններին։

Հայաստանի աշխատավորների տոնը նրանց հետ միասին նշում են նաև Եղբայրական սովետական ռեսպուբլիկաների բանվորներն ու գյուղացիները։

Այդ տարեդարձի առթիվ ՌԿ(բ)Պ Անդրկովկասյան Երկրային Կոմիտեի անունից Ս. Օրջոնիկիձեն ուղարկում է հետևյալ ողջույնը։

«ՀԿԿ Կենտրոնական Կոմիտեին.

Թիֆլիս 29 նոյեմբերի։ Մի տարի սրանից առաջ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը տեսնելով իր հայրենիքի բազմաչարչար բանվորների ու գյուղացիների անմեղ արյան վտակները, հաստատապես որոշեց վերջ գնել մեկ ընդմիշտ այդ տանջանքներին և ապստամբվեց Հայաստանի աշխատավորությանը ծաղրող դաշնակների դեմ։ Ապստամբությունը պսակվեց հաղթանակով. Հայաստանում խաղաղություն և հանգստություն է տիրում։ Այժմ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պարծանքով կարող է հայտարարել ամբողջ աշխարհին, որ նա միայն կարողացավ հաստատել խաղաղությունը և բարի-դրացիական հարաբերություններ հարևան պետությունների հետ։

Կեցցե Հայաստանի Կոմունիստական կուսակցությունը։

Կեցցե Խորհրդային Հայաստանը։

Օրջոնիկիձե»։[2]

Սովետական Ադրբեջանի աշխատավորության անունից ջերմագին ողջույն է ուղարկում Ադրբեջանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի քարտուղար Ս. Մ. Կիրովը։ Այնտեղ ասված է.

---

[1] Г. К. Орджоникидзе, Избранные статьи и речи, стр. 160.

[2] «Коммунист», № 238, 1921 թ., դեկտեմբերի 4։

«Մենք խորը համոզված ենք, որ Անդրկովկասի բոլոր հանրապետությունների միացման աշխատանքը մոտիկ ապագայում կպսակվի կատարյալ հաջողությամբ և այդ իսկ ակտով ազգամիջյան հաշտությունն էլ ավելի անխախտ կդառնա և Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրությունն անհողդողդ կմնա։

Այսպես ուրեմն կեցցե Անդրկովկասի աշխատավորությունը և խորհրդային իշխանությունը։

Կեցցե Անդրկովկասյան հանրապետությունների եղբայրական միությունը։

Կենտկոմի քարտուղար՝ Կիրով»։[1]

1922 թվին Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների պատմության մեջ նոր էջ է բացվում։ Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման շնորհիվ ձևավորվում է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի սովետական ռեսպուբլիկաների անխախտելի եղբայրական միությունը— Անդրկովկասյան ֆեդերացիան։ Նույն թվի վերջերին կազմակերպվում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների հզոր Միությունը, որի հավասարազոր անդամներից մեկը դառնում է Անդրկովկասյան ֆեդերացիան։

Այդ պատմական ակտերը Սովետական Հայաստանի համար զարգացման նոր, ավելի մեծ հեռանկարներ են բաց անում։

А. М. Акопян

Советская Армения в начале перехода к мирным работам по восстановлению народного хозяйства (в 1921—1922 гг.)

Резюме

Советская власть в Армении установилась в то время, когда Советская Россия находилась на последнем этапе военного коммунизма и подготовлялась под руководством большевистской партии к переходу к новой экономической политике. Под руководством большевистской партии создавая и укрепляя органы пролетарской диктатуры, Советская власть в Армении с декабря месяца 1920 г. до весны 1921 г. проводила политику военного коммунизма.

В это время Советская Армения находилась в весьма тяжелых условиях. В результате авантюристической политики презренной агентуры иностранных империалистов—дашнаков отсталое хозяйство страны было разорено. Нищета, голод, эпидемии были массовым явлением. В Александропольском (ныне Ленинакан) уезде стояли турецкие оккупационные войска, которые грабили, уничтожали армянское население. Трудящиеся Лори стонали под игом меньшеви-

[1] «Կոմունիստ» № 236, 1921 թ., դեկտեմբեր 21։

ков (до середины февраля 1921 г.), в Зангезуре хозяйничали дашнакские банды (до середины июля 1921 г.).

В феврале 1921 г. по диктовке и с помощью англо-французских, американских и турецких захватчиков злейшие враги армянского народа и другие контрреволюционные партии начали вооруженное выступление против Советской власти в Армении (февральская авантюра). Целью этого выступления являлось свержение Советской власти и восстановление господства эксплоататорских классов. Начавшаяся гражданская война в Советской Армении продолжалась пять месяцев и окончилась победой Красной Армии. Из Александрополя были выброшены турецкие оккупанты, в Зангезуре установилась Советская власть. Рабочие и крестьяне Советской Армении получили возможность приступить к мирному строительству.

По указанию освободителей армянского народа В. И. Ленина и И. В. Сталина Советская Россия и другие братские советские республики своей помощью обеспечили победу трудящихся Армении в гражданской войне, укрепление советской власти.

На основе решений 10 съезда большевистской партии с весны 1921 г. начинается переход от военного коммунизма к новой экономической политике. Этот переход был решительным поворотом в политике большевистской партии в деле обеспечения победы социализма в нашей стране. Троцкисты, бухаринцы и другие антипартийные элементы яростно сопротивлялись всем начинаниям партии. Нанося под руководством В. И. Ленина и товарища Сталина сокрушительные удары троцкистам, бухаринцам, буржуазным националистам и другим подонкам, партия большевиков твердо осуществляла взятый ею курс.

В деле осуществления новой экономической политики и обеспечения дальнейших успехов социалистического строительства для большевиков Армении огромное значение имело программное „Письмо товарищам-коммунистам Азербайджана, Грузии, Армении, Дагестана, Горской республики“ В. И. Ленина (14 апреля 1921 г.). В этом письме В. И. Ленин гениально наметил пути осуществления новой экономической политики и победы социализма на Кавказе. В своем докладе „Об очередных задачах коммунизма в Грузии и Закавказье“, сделанном 6 июля 1921 г. на собрании тбилисской организации Коммунистической Партии (большевиков) Грузии, товарищ Сталин указывал боевые задачи большевиков Закавказья в деле борьбы за восстановление народного хозяйства. Руководствуясь указаниями В. И. Ленина и товарища Сталина, большевики Армении мобилизовали рабочих и крестьян республики для успешного осуществления восстановления народного хозяйства.

Укреплялся экономический, политический и военный Союз Советских республик Закавказья—Азербайджана, Армении и Грузии. В апреле 1921 г. произошло объединение Закавказских железных дорог, в мае были ликвидированы таможни, как между Закавказ-

скими советскими республиками, так и между Закавказьем и Советской Россией. В июне произошло объединение внешней торговли Армении, Грузии и Азербайджана. Во внешней политике они также выступают объединенно, во главе с Советской Россией.

Благодаря принятым партией большевиков и Советской властью мероприятиям на первом же этапе перехода к новой экономической политике средняк совершает решительный поворот в сторону Советской власти. Преодолевая все трудности, крестьяне-бедняки и средняки под руководством партии большевиков приступают к восстановлению разоренного сельского хозяйства. В 1921—1922 гг. в Советской Армении проводятся значительные работы по ирригации. В эти годы начинаются работы по расширению Ереванской гидроэлектростанции и ведутся подготовительные работы к постройке новых. Делаются первые шаги к восстановлению промышленности: начинают работать Ереванский винно-коньячный завод „Арарат", два кожевенных завода, механический завод. В 1922 г. от рабочих Иваново-Вознесенска был получен подарок—оборудование текстильной фабрики, на базе которого в Александрополе была открыта текстильная фабрика. Начинает расширяться полиграфическая промышленность. В значительной мере смягчилось тяжелое продовольственное положение республики.

С помощью Советской России и братских советских республик все больше и больше укреплялось внутреннее и внешнее положение Советской Армении.